

# ՅՈՒՆՈՆ

ՊԵՐՃ ՊԹ-0ՇԵԱՆՑԻ

(Յարուճնակութիւն 1)

ԺԵ.

Մի հանդամանք մենք անուշադիր թողինք պարմուածքիս նախընթաց գլխումը, որը սակայն մթութիւններ պարզելու համար ներկայումս անհրաժեշտ է:

Ահմօ բէզի վրանները տուած էին Քաջալ թափա կոչուած բլրի սրբութում: Վրանների գոներն ուղղակի նայում էին Դէզի հիւսիսից հարաւ ընկած մի ձորահովիր: Զորակի արեւելեան թմբին, ճշշդ Ահմօ բէզի վրաններին հանդիպակաց կարգով տնկորուած էին համայնքի վրանները:

Այս մի բացառական Դիրք չէր տեղադրութեանն յարմարացրած: Ալսոկս էր ամեն որել ընդունուած կարգը: Էլբէզու վրանները սովորաբար տնկում են բարձրավանդակների վերաց՝ հայեացքն ուղղած Դէզի ցած տրուած վրանները, որոնց ներքոց պարսպարում են էլբէզու հովանաւորութեան տակ գտնուած ժողովուրդը:

Ուզում եմ ասել, թէ մենք մեր վրանի միջից զուարճանում էինք Ահմօ բէզի հսկողութեանն յանձնուած համայնքի նիսոր ու կացը, երեխանների լացն ու ծիծալը, կանանց պարապմունքներն ու շարժմունքները տեսնելով:

<sup>1</sup> Սկիզբը Մուլք 1900 թ. № 1, 2, 3:

Եթէ վրանի նստուածքի տեղը հաւասար տարածութիւն լինէր, մեր ազատ բեսողութեանը շատ աննշան կերպով կարող էր խափանառիթ լինել ինքը հիւրասէր փանփէրը՝ ծնկների վրայ առաջներիս չքած դիրքովը: Բայց այժմ, եթէ Ահմօ բէգն իւր բարձր հասակով կանգնած էլ լինէր առջևներս, չէր կարող մեզ արգելք լինիլ դէմուդէմը նայելու, որովհետեւ մենք նստած էինք վերի կումում հաւասարացրած փափարակի վրայ, իսկ Ահմօ բէգը զառիվայրի բերանում էր չքած:

— Հեռուն նայիր, յանկարծ առաց ինձ տէրտէրը:

Նայեցի և սոսկացի:

Դիմացից համայնքի վրանների վերի կողմն ընկած նեղ ճանապարհով դէպի մեր կողմն էին գալիս երկու ձիաւոր, մէջ առած մի բարձած ձի:

Եթէ չըփեսնէի անգամ մէջ տեղի ձիու վրայ բարձած բեռը, դարձեալ չէի կարող առանց սարսափի անբարբեր մնալ: Այժմ երկու էր շփոթուելուս պարձառը, նախ՝ որ անմիջապէս ճանաչեցի երկու ժամ առաջ Սուլէյման բէգի մեզ մօր պարզամաւսր ուշարկած աւագակին, որը քաշում էր բարձած ձիու սանձը: Երկրորդ՝ որ բարձուած բեռը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ երկու անշնչացած մարդկացին դիակներ, որոնց ողքերը ճօնում էին ձիու կողերին դիպէլով:

Այնքան շփապով էին գալիս բեսնաբերները, որ Ահմօ բէգի որդիքն ու դասնաւոր ամբոխն իրանց դանուակով ժամանակ չունեցան շուրջով նկատելու արդասովոր դէպքը: Նրանց ուշքը մեր վերայ էր, իսկ Ահմօ բէգի երեսը դարձեալ մեր կողմն էր:

Ոչ քահանան և ոչ ես ձայն չենք հանում և միայն աչքներս սեռնել, մորիկ ենք դալիս:

— Ո՞ւր է Ահմօ բէգը, յանկարծ կանգնեցրին ձիանքն եկողներն և գոչեցին, շնուր, կանչեցէք էլքէզուն, Սուլէյման բէգն ասում էր՝ յժող էս դիակները դեղաւորի, մեզ էլ հաց ու պաշար դայ՝ պնանք: Անիծած հայ շուն-Յունոն յարձակուեց մեր խմբի վրայ, էս երկուսին սպանեց, և եթէ Սուլէյման բէգը չըփախչէր ու մենք էլ նրան չըհետեւէինք, բոլորիս կոփորած կը լինէր: Դեռ լաւ էր, որ Աստուած Յունոյի խելքն առաւ, եփմէներիցս չընկաւ: Մենք էլ յետ դար-

ձանք, մեր դիակները վերցրինք: Նպաստ արժասանած այս մի քանի խօսքի հետ՝ աւագակները ցած թռան իրանց ձիանց վրայից ուղղակի վրանի դրանք:

Այնքան անակնկալ էր դեպքն և անստիագիւմանելի, որ Ահմաբէզը հազիւ այսպանը բացականչեց.

—Զեր գունն Ասորուած քանդի, որ իմ գունը քանդեցիք: Եւ Ահմօբէզն երկու ձեռքը դերնին սիւն որուեց, ուզեցաւ տեղիցը կանգնել:

Խեղճը չըկարաց. Ծնկները ծալուեցին ու երեսի վրայ վայր ընկաւ:

—Ոչինչ, ոչինչ, Ահմօբէզ, գոշեցի ես և ձեռքս ձգեցի թեւը:

—Ալլահ ու ապկեար, երանեալն էստեղ, ձայնս լսեց, աչքն երեսիս ձգեց մեր պարզամաքերը: Նա ական թօթափել՝ հեծաւ կրկին ձին ու որքան կռնումը զօրութիւն կար, խեղճ դրաարին միրակեց:

—Երանալլը, կրկնեց ընկերի բացականչութիւնն երկրորդ աւազին ու ձիու դլուխը յետ դարձրեց:

Մինչ ես ու քահանան Ահմօբէզին գերնին կը պառկացնէինք, աւազակներն անցան ձորաթմբի միւս երեսն և անհետացան:

—Շոււր ջնուր, ջնուր բերէք, գոչեցի ես վրանի դրանը ժողոված ամբոխին, Ահմօբէզի ուշքը գնաց, ջուր հասցրէք:

Փառաւորի քահանան, ես մոռացել էի, որ առջևներս մեծ քերեղանով սառը կաթն էր դրած. Վերաբէրն առաւ պնակն և դաստիարկեց Ահմօբէզի դլսին:

Կաթի սառնութիւնը ցնցեց փոքր ինչ էլքզու նեարդերը, ծերունին աչքերը բացեց ու դարձեալ փակեց:

Ներս թափուեցին այդ ժամանակ բէզի որդիքը, ջուրն էլ ժամանակին հասաւ, իմ հարամանով վրանի երեսի մասը վեր քաշուեց. Ջրի և հողի սառնութիւնը կազդուրեցին հիւանդին և հինգ բոպէից Ահմօբէզն ուշքի եկաւ և աչքերը բաց արեց.

Կը ներես, երանալ, վերջապէս կարողացաւ նուազ ձայնով ասել Ահմօբէզ:

—Ոչինչ, ոչինչ, մի՛ նեղանալ, սիրութ լայն պահիր, խրախուսեցի ես:

—Ասորուած էդ աւազակների վիզը կորրի, շնչաց և ուսերը վեր քաշեց Ահմօբէզ:

— Ես քո տեղը լինէի, նոյնը կանէի, միջամբեց տէրտէրը, թռղել ես դունու տեղի, եկել ես էս սարերի միջին մի քանի փառի համար կծկուել, կարող ես նրանց հրամանը չլիտարել, մի գիշեր կը գան քեզ էր, քո համայնքին էլ կը ջնջեն:

Ողբմի' հօրդ, ինչ կասեմ հասկացոլ մարդին:

— Ես հիմի ինչ պիտի անեմ էս դիակները, ուսերը վեր քաշեց Ահմօ բէդը, ես մօլլա եմ, թէ պէրսէր եմ, որ մեսել թաղեմ:

— Հայ եթէ լինէին, իմ գործն էր, բայց որ մուսուլման են, ձեր մօլլի գործն է դրանց դրախտն ուղարկելը, հեղնեց քահանան:

— Իրաւ, ինչ կը հրամայես, երանալ, դարձաւ ինձ Ահմօ բէդը,

ես դիակներն ինչ անեմ. դիւանին յալոնեմ:

— Մեր երանալը չըգիրէ, մեր կեանքին անծանօթ է, խօսեց քահանան, բայց ես ու դու էս սարերի մէջն ենք մեծացել, մեր ցաւը մեզ է յայտնի. առաջինը չէ, վերջինն էլ չի լինելու, օրական էսպիսի բաներ միշտ պարահում են. եթէ ամեն մէկի համար դիւանին իմաց դալու լինինք, պիտի մի թելլուզրաֆ սարքենք ու առաջիցը չըգիրկենանք: Մի տկանջ անիր, մոլլին կանչիր, թող պանի թաղի. հրամայի ջահէներից մէկին էլ, թող մի քեռը հաց ու պաշար բարձի բանի Սու էջման բէզին. ձեր ողայքն, ի հարկէ, նրանց բունը դիմուն, էնքեղ էլ չըլինեն, զիշերը յետ կը գան. աւազակներն էլ մեզ պէս մարդիկ են, նրանք էլ ուղել կուղեն:

— Զարմանալի մարդ ես, տէրտէր, էնպէս ես խօսում, կարծես թէ ես աւազակներ պահող, աւազակի ընկեր լինիմ. մեր երանալը հիմի ով զիրէ, ինչ կարծիքներ պիտի անի:

— Այ մարդ, քէփդ քօք պահիր, պարասխանեց տէրտէրը, մեր երանալը, փառք Ասրծու, մեր աշխարհի ձագ է, սա մեր դրութիւնն ինձանից ու քեզանից լաւ է հասկանում. սրա ինչ ցաւն է՝ գնայ զլուխը փորձանքների մէջ լիճճի: Նթէ իրան հարցնելու լիճին՝ ուղու դիսած կմաւ: Կը պարասխանի: ուղուի քոշակ (կողապէ) էլ չեմ դեսել: Էնպէս չի, երանալ, դարձաւ ինձ տէրտէրը, դու մեծ. մեծ գործերի տէր մարդ ես, դու ինչ ժամանակ ունիս դարարկ բամբասանքների ականջ դնելու, կամ դիւանի դռներում վկայութիւններ դալու:

— Ի հարկէ, ես այսօր այսրել եմ, վալը կարող եմ Մոսկովումը

լինիլ. մենք ծառայող մարդիկ ենք, եթէ մեզ յանձնած գործերն էլ կարողանանք օրինաւոր կարարել, մեծ բան է հասրարեցի քաղաքագէտ քահանացի խօսքը և խորհուրդ տուի վերջացնել մէջ ուելից Դիմիները:

—Դէ հիմի էլ հրամացի, թող Սուլէյման բէզի պաշարի հողսը քաշեն, նորից միջամբեց տէրպէրը, երբ Ահմօ բէզի հրամանով դիակները դարսն թալիլու. ոչինչ, մեր երանալի սիրոն անփակ ծով է, շար էդպէս դաշտնիքներ կան մէջը, որ իրան ու Ասդուն են լայրնի. սա ինձ ու քեզանից լաւ գետի, որ ամէն գիշեր ժողովրդի մեծերի գներում աւազակներն ու ճանապարհ կորողներն են, ընթրիքի վերի կողմը բազմողները. քեզ մօս Սուլէյման բէզն է, ինձ մօր Յունոն է, մի զիւղական դանուպէրի մօս Ալին է, կամ Եղոն է: Ի՞նչ անեն Ժողովրդի տէրերը. եթէ այդպէս չանեն, կարող են գիւղեր ու էլեւ պահել:

—Լաւ է ասում ուէր հայրը, Ահմօ բէզ, Դարձայ ես մեր պահնուածակիրոջը. կարգադրի թող Սուլէյման բէզի համար պաշար գանելու:

—Գլխիդ լուրբան, լաւ ես հրամանք անում, իրիկնադ' մ կը պապէ աստիճն կը դանեն, հիմի մեզ օրուջ է (պահք), մինչև լուսինը ըլդուրո դայ՝ ոչինչ չենք ու պիլ. էդ հացն էլ որ բերին քո հրամանոց համար, մեր ընդանիքը ազիզ խաթրիդ համար օրուջը քանդեցին, ձեռաց շաղախեցին, երկաթէ բոլի վրաց թխեցին, թէ չէ մելքս ինչ թագինեմ, դանը հացի փշունք էլ չըկար:

—Եթէ այդպէս է, ուրեմն ես քէյլանի (դանդիկին) քրոջ մելքի մէջ եմ գցել, թող ուրեմն իր անդես անձանօթ եղբօրից էս հասարակ դանակն ընծայ արանայ, որ չար ու լալկան երեխաների ականջները կորի<sup>1</sup> ասացի ես և հանեցի գրալանիցս մի նոր երկրենանի փոքրիկ դանակ և պուի Ահմօ բէզին:

Բէզը սկզբումը չէր ուզում վերցնել, բայց վերջը, չուզելով սիրոս ցաւացնել, ընդունեց իմ հնչին նուէրը:

Ի դէպէս մօրս միշտ պահնում էի այդպիսի Դիւրաղին նուէրներ, պեղին և յարմարութեանն ընծայելու համար:

<sup>1</sup> Ասիական ազգերը երեխաներին մեծերի կումից ականջ կորելու սպառնալիքով են երկիւլ աղդում:

## Ժ Զ.

Ուրեմն, ոիրելի Ահմօ բէդ, կերանք, խմեցինք, հանդստացանք, ժամանակն է՝ որ գնանք մեր պարզպը կարարելու։ Ինչպէս ուշեհայրը մի ժամ յաւաց ասաց, հրամայի ձեր քանուգէրին՝ թող երեսուն քաջ ձիաւորներով ինձ ճանապարհ դնի մինչև նոր-հայազիդի գաւառի Գ. դիւլի ամարանոցը։

—Ոչ երեսուն, ոչ քսան, ոչ հինգ, զլսիդ մասմած պարասիստնեց Ահմօ բէգը, ես հրամանոցդ կը յանձնեմ քո ծառաներին —իմ երկու որդւոցը. նրանք քեզ ողջ ու անվտանգ կը հասցնեն ոչ թէ Գ. գիւղի ամարանոցը, այլ աւելի այս կողմը՝ մինչև Դարալագեադցի քանուգէր նասիր բէգի վրանը։ Ողորմած տէրութիւնը մեր պարարականութեան սահմանը մինչև այնպեղ է նշանակել։ Խոկ այնպեղից ձեզ կը քանեն ձեր հրամայած Գ. գիւղի ամարանոցը։ Քո շնորհիւ՝ իմ որդիքս հարիւր ձիաւորի կարող են պարասիստ փալ, ինքը Յունոն կը նրանց ելունզը չարժի, եթէ իրաւունք ունենային քանը թագցրած այնալու հրացանները վերցնելու։

—Միթէ քանն ունիք արագագարկ հրացաններ, հարցըի ես։  
—Դէ, հերիք է, երանալ, մեզ անբան անասունների գուշ դնես ու միամիտ ձևան աս, միջամբեց քահանան. միթէ քեզ յայսնի չի, որ ամէն մէկիս ուանը քասներով կան այդպիսի հրացաններ ու ընվորներ. միթէ դու հաւաքացիր, երբ որ ևս հրամանոցդ ասացի, թէ ունեցածս զէնքն էս անչախմախ հրացանն է. շար լաւ էլ ու զում էի 16 անգամ բացուող, ոսկու պէս փայլող հրացանս վերցնեմ, բայց որ իրաւունք չունէի, կռներս կապուած էին, Ասդծու անունը պուի ու մի հին կոտրած հրացանով ճանապարհ ընկայ, այն էլ՝ դու հրամայեցիր՝ չուզեցայ կամքեց չըլիագարել, թէ չէ հս զիտէի, որ մեր Ահմօ բէգի քունը իւր եմ զալու և ոչինչ զէնքի կարօպութիւն չունէի։

—Եաբ լաւ էք անում, որ ձեր կեանքի ապահովութեան համար կարարելագործուած զէնքեր էք պահում, ասացի Ահմօ բէգին և իրաւունք պուի որդւոցը վերցնել իրանց նոր սիստեմի հրացանները։

Երկու յաղթանդամ հասպ ու պինդ գլամարդիկ ոչխարենի

բոլորշի գլխարկը ծածկած, դեղնագոյն չերքեզի չուխաները հա-  
զած, լայն շալի անդրավարդիկների փոխկերքը կաշուեաց զանգա-  
պանների մէջ ամրացրած՝ նստեցին մի մի հաստամարմին գէր ու  
մսու մերկ մասակ ձիու վրայ և ուսերից կախեցին դաճկառուսա-  
կան պատերազմի աւարներից ձեռք բերուած պիտողի կոչուած սիս-  
տեմի արագազարկ հրացանները, որոնք ժողովրդի բերանում այնա-  
լու յացոնի անունն են սփացել:

Հարկաւոր էր մօփից զննելու, որպէս զի կարելի լինէր հրազէն-  
ների գիսակը որոշել: «Պիտօդիօ հրացանն ըստ ամենալնի ձեափո-  
խած էր և սարսկական հրացանի վերածած, երեք արծաթէ օլեր,  
որոնք սեպհական յարկութիւնն են ասիական հրացանների, դարդա-  
րում էին փողովակները»:

Այդ արած էր, ի հարկէ, ուշադրութիւն չըգրաւելու դիմ-  
մամբ:

Իրաւունք ունէր անշուշտ Ահմօ բէգն իւր որդիքներով պար-  
ծենալու, իւրեանց միակ հրացաններով նրանք հարիւր աւազակի  
պարասխան կարող էին վալ: Իմ թիկնապահներս ոչնչով չէին զանա-  
զանում աւազակալուներից. իրանց կորիճնութիւնը ցոյց դալու  
համար, մարտիների քամակը թռան թէ չէ, միմեանց աչքով արին  
և կրնկեցին նժոգներին:

Զորահովիքի երկայնութեամբ՝ սանձարձակ այն մարտակներն  
ազար իրաւունք պուած իրանց ուրքերին, ոչ թէ վազում էին գեւ-  
նի վրայ, այլ եթէ չափազանցութիւնից ըլվախենացի, կասէի, թէ  
թեաւորուած պարաւում էին օդը Եւ Բնէ էք կարծում, մարա-  
ներն իսկապէս սանձարձակ էին. մի մի պարանի կրոր, շնորհքի հա-  
մար՝ պար էին դրուած վզերովք. ոչ սանձի երկաթ և ոչ լիամ ու  
երախակալ չէին ցաւացնում նժոյգ մարտիների երախները: Պարանի  
ծայրը թոյլ բանած Ասադն ու Բաղիշը—Ահմօ բէգի հարազակները—  
մի մի մարմնացած դեերի էին նախում: Մէկ դեմնում էիր՝ թի-  
կունքների վրայ ուրքերը ձիանց պարանոցին Դրած պառկել են, մէկ  
յանկարծ վեր էին ցափկում և ձիու մէջքին ուղղահայեաց կանդ-  
նում ու հրացանները մականի նման օդի մէջ վեր շպրտելով ու  
բռնելով խալս յինում, մէկ էլ կանգնած դեղից սրունքը լայնաց-  
րած՝ նստում էին ինչպէս թամրի մէջ:

Վերջապէս ամենայն ճարգիկութիւն որ մրածուած է գանազան ձիախաղաց կրկէսականների կողմից, նրանք կարարում էին ամենայն յաջողութեամբ:

—Քո զուլերդ՝ իմ զաւակներս, երանա՛լ, ասայ ինձ վերջին հրաժեշտին Ահմօ թէդը, այսօր քո երկու որսկան չներն են, որոնք դեղն եկած ժամանակ՝ և զալլիսելի դամբռներ են, ինչ կը ցանկանաս, հրամայի Ե՛յ, երեխայք, դարձաւ Ահմօ թէդն իւր տղաներին, մեր ողորմած երանալին զլուխներիդ վրայ նստացրած՝ հասցրէք նասիր բէզի վրանը, աշխարհցէք՝ որ զիւլը սոյմիշ Հըլինի: (Պարսկական ոճ է, բառացի նշանակում է վարդի թարմութիւնը չւ թառամի, այսինքն՝ ոչինչ վնաս Հըլիպչի). ձեր աչքի լուսի պէս հոգացէք և նասիր բէզի իւր ձեռքով գրած մի մասը թուլթ բերէք ինձ անվանդ և հանգիստ գեղ հասնելու համար, որպէս զի ես կարողանամ գիշելս հանդիսար քնել:

—Բա՛շ ուստա, զա՛շ ուստու՛ (մեր գլուխ վրայ) խմնարհ երկըրագութիւն գույն մինչեւ ծունկ մեր կորիճները:

—Մեր ուրբագլին քո խնայքին եմ յանձնում, ասայի Ահմօ բէզին, որից խնդրում եմ՝ ողջ առողջ գուն համար՝ ինձ Թիֆլիս թել քաշել և այն ժամանակը՝ ոբքան ձեռքիցս կը գայ՝ ողորմած սարդարից ևս քո հաւափարիմ հպատակութեան ապացուցը կը խնդրեմ. մեղք է քեզ նման մարդկանցն անուշադիր թողնելը:

—Մեր դրացի քէշիշ աղային, ողորմած երանա՛լ, պապսսիանեց Ահմօ բէզը, վարդի նման հոգ քաշելով՝ ձեր պեղովս ինքս կը դամանեմ իր ընտանիքին պահ կը դամ դու միամիտ բանիր ձանապահների ու զնա, և որովհետեւ հրամանքդ արժան չարեցիր մեզանից մի ձիու պայտի զին ընծայ սրանալը, ուրպէրի պարգևն իմ աչքի վրայ, կը շահենք սրան՝ որքան մեր ձեռքից կը գայ:

—Դու քեզ համար ապահով ճանապարհ շարունակիր, երանա՛լ, խօսեց իւր կողմից քահանան, ևս ու մեր Ահմօ բէզը մեր գործը զիւնենք, մի՛ հոգալ, սարանան իր դունը չի քանդիլ. ևս էս գիշեր սրա մօր փլան ու գառան դաստիմէն անուշ կանեմ, էզուց երկու տղայ կը վերցնեմ, մէկի ձեռքն այնալու հրայան կը դրամ, միւսի առաջը սրա հօրից մի մասլի գառը կը դնեմ ու Ահմօ

բէդի կեանքն ու արացուածքն օրհնելով՝ ճանապարհ կը նկնիմ, կը րանեմ գտուը, ամէն մի կոտր խորովածի վրայ մի բաժակ նվանաձորի անուշ զինի դարդակելով՝ իմ ոսկի հարեան Ահմօ բէդի ու իր քաջ ողէքանց կենացը կը խմեմ, հետն էլ մէկ մէկ քեզ կը լիշեմ և աւ չեմ ասնամ, ազիզ հարեմն, դարձաւ տէրդէրը Ահմօ բէդին:

— Եդ բնէ խօսք է, քէշիշ աղայ, միթէ դառն իմ պատուիս քայլել է. մի շիշակ, դէր, երեք տարեկան որձ կը դամ քեզ, որ կէսը նոր նոր քայլես, կէսն էլ դալուրմա դնես, ձեռն էլ մեր երանալի առողջութեան բաժակը խմես և եթէ նեղն էլ ինձ յիշես, շար շնորհակալ կը լինիմ:

— Ու րեմն դուք միմեանց պարիւ գուեք, Ահմօ բէզ, ասացի, իսկ ես գնամ իմ սկարագո կարարելու:

Ծերունի գանգուէրս մօրեցաւ, ձիու ասպանդակը, հակառակ իմ արգելանքի, իւր ձեռքով սկինդ բռնեց, աէրուէրն էլ շնորհքի համար՝ Ահմօ բէդին նմանեց և ձիուս սանձի ծայրին կպցրեց մագուները: Կարիք էլ չը կար, հինգ թուրք միասին էին մօրեցել և ինձ ձի հեծացնում:

Մի ժամից՝ մենք մօրեցանք նասիր բէզի վրանին:

ԺՇ.

Մի լնդարձակ ձորահովում՝ չորս կողմից ապահովուած բարձր լեռնաշշմբաներից ճիւղաւորուած ըլուրներով՝ խփուած էին 150-ից աւել վրաններ, որոնց վերի կողմն աչքի էր լնինում մի փոքրիկ լրանախումբ իւր բարձրադիր նարուածքով. իսկ դրանց առջել դնկուած էր կարմիր ժաղաւէններով զարդարած մի շքել և մէծ վրան:

Մի զրկաչափ սկարզորակ վրակ քչքչալով ցած էր վազում երկու լեռնաթմբեր մլացնող ձորակից և թափում վրանախմբի ներքեմի խոր ձորը:

Առուի ափին՝ կանաչազարդ դափարակի վրայ, փառահել վրանի առաջին փառուած էին մի քանի գորգեր: Բոլորակ թաւշեաց բարձերը զարդարում էին գորգերի վերի կողմը:

— Անշու շու, այս է նասիր բէզի վրանախումբը, երկի ինքն

ևս հարուստ կալուածափէր է, այնպէս չէ, մադնացոյց արի հեռուից Ահմօ բէզի մեծ որդուն:

—Գլխիդ մարտակ, երանակ, ամէն պսպղացող ոսկի չէ, շաբանգամ արեի ճառագայթներով լուսաւորուած ապակու մի կոտրաւելի է փայլում, քանի թէ շուաքումն եղած չաւահիրն ու յակինթը, պատասխանեց ուշեկիցս և շարունակեց.

—Մի տկլոր հովուի մահից յետոյ որբ մնացած, շների հետ լափ լկող նասիրը մի օձ է, որ առաջինը շանթում է իր բարերարին:

Դարաբաղի էլքէզիների մէջ յացորնի, ամէնքից սիրուած ու յարգուած մի էլքէզի այսօր այդ անաղուհաց ապերախսու նասիրի շնորհիւ՝ փթում է Սիրիրում: Մի օր՝ նասիր ասուած փուչը՝ իշխանաւորների առջևն ընկած՝ հարիւր չափար ու ղազախի հետ գալիս կանդնում է իր բարերարի գլխավերել, որի հացով ինքը մեծայել էր և ցոյց է տալիս դիւնանի մարդկանցն երկու տարի առաջ սպանուած մի մարդի իրեղիները:

Նասիրը շաբ լաւ է իմանում, որ այդ կահկարասիքն ուրիշ մարդ է պահ գուած եղել իր բարերարին, բայց նա չի ամաչում յանդգնութեամբ զրպարփել, թէ մարդին սովանողն էլքէզին ինքն է եղել: Ողջ հասարակութիւնն երդում կրակն է լնկնում, լիզու է թափում, գոգերով փող է մէջ փելլը խաղացնում, բայց մեծաւորին չի կարողանում հաւաքացնել, թէ էլքէզին արդար է: Մեծաւորը նոր եկած մարդ է լինում, խեղճ էլքէդու կոյր բաշից՝ դեռ մուժուա (ձրի) փողերի համին սովոր չի լինում: —Կամ էս ասրանեքը քեզ պահ գուողին բերան գուր, ասում է, կամ կողոպտողն ու սպանողն ինքդ ես:

—Անփարականս, ընդհափեցի ես, արեի լոյսի պէս պարզ է:

—Ռ'չ, զլխիդ մեռնիմ, հրամանոցդ հետ մեզ հիւր եկող Ղուշչիրելակի դէրպէրն ասում էր, որ դու մեր աշխարհքի մարդ ես, մեր կեանքին ու սովորութիւններին ծանօթ ես, բայց ես գեւնում եմ, որ էդպէս չի, ձեռքը կրորականապէս թափ գուեց Ահմօ բէզի մեծ որդին: Եթէ դու մեր հող ու ջրի ձագ լինէիր, դու ինքդ կասէիր, թէ ամանաթ գուողի աւանդը սրբութեամբ պէտք է պահպանել ու գուողի անունը բերանից չըպիտի հանել, թէկուզ՝ նրա

փոխարէն իր զլուխը զնդանի մէջ դնել հարկ լինի, Եղակս հէնց արեց էլրէզին. բարեկամի զաղանիքը դուրս չըրուեց, աշխարհի առաջին սպանութիւնն իր վիզն առաւ ու Սիրիր գնաց:

Երկիրը նրա համար այրուեց ու մղիքաց, մեծ ու պատիկ ապերախոր նասիրի վրայ ապամները կրմացը ին, և անկարծիք, շան նման կը սարկացնէին, եթէ համարձակուէր մնալ մեր հասարակութեան մէջ: Խելք արեց, թողեց Նարաբաղի հողը և փախաւ Դարալազեազ:

—Եւ հիմի թէ մեծ պատիւ ունի և թէ էլբէզի է, շեշպեցի եւ:

—Ե՛հ, քեզ լաւ յայտնի է, երանալ, որ լրպեսին ոչ ոք չի սիրիլ, բայց ախար երկրի կառավարիչներն առանց լրպեսի չեն կարող մնալ: Չուղուլ է հարկաւոր, որ ամեն քունջ ու պուճախ ներս խցկուի և համբաւներ դուրս քաշի:

Դարալազեազումն էլ մաքնչութեան ցած պաշտօնը յանձն է առնում փիրադրուժ նասիրը և սկզբներում՝ ինչպէս դիւանի մարդկանց ձիապան, վերջն՝ ինչպէս եասաուլ, կամ չափար, Դարալազեազն իրարոցով է քալիս:

Զենք կարող ասել, թէ խելօք ու քաջ չէր խողի ձագը: Իւր խելքի ու կործութեան շնորհիւ էր, որ կարճ միջոցում՝ Դարալազեազումն անուն հանեց և գրաւեց ու ցնդացրեց գաւառի առաջին հարստի միակ աղջկանը:

Նար էլ չէր ցանկանում անամօթ աղջկաց պապու ական հայրը մի դրսից ներս ընկած լակոպի փեսայացնել, շաբ էլ գաւառի արժանաւոր երիտասարդներն ուզում էին որիքանալ անուշ պարառին, բայց մի օր՝ լոյս ցերեկով՝ յանդուզն նասիրը՝ հօր բացակայութեան ժամանակ՝ երեսուն ձիաւորով շրջապատում է փունը և սիրածին փախցնում, մի երկու շաբաթ սարերումը հետը քարշ դալիս ու բերում հօր շեմքովը ներս անում:

Ի՞նչ անէր մարդը, աղջիկը որ կայ՝ շուշաց է, որ կոտրուեց, չի կարկապուիլ, աղջկաց անունն ընկնիլն ու կոտրուիլը մէկ նշանակութիւն ունի, փշրպուած կոտրպանիքն ում է պէտք: Հայրն արիստում է անդուն անդեղ փախարականին գնիեսայ շինել ու տարի չըքաշած՝ ինքը դլուխը ցած է դնում և շունչը փչում:

Այդ օրից նասիրը փուն ու տեղի, կալուածքի ու սպացուած-

քի տէր է դառնում և իշխանաւորների դռներին քարշ գալրվ՝ մի քանի դարի գիւղի պանուածէրութիւնն է ձեռք բերում ու այնուհետեւ ըլէզա անունին է տէր դառնում և ողջ գաւառի մէջ խօսք ու սպարուի տէր առաջին մարդն է համարուում:

Ի հարկէ, կարող էր, ով կը համարձակուէր «Նասիր-բէդին» չըհնազանդուիլ, ո՞ր հարուստն ամեն ըստըամեների նրա համար լնաներ չէր ուղարկիլ: Մի օր՝ այնպիսի անհեռագետ գիւմարն իր ձեռք ու ոռքը շլթայած կը դրնէր և ամիսներով «Ճակումը» (բանակը) կը փթէր:

Ամիսը դարի կը դառնար ու այն լիմարը մինչեւ որ իր կարողութեան կէսը Նասիր-բէդի իրան ձեռքով՝ վերջին եասաւուից բունած՝ բոլորովին չուրացնէր, բանախց չէր ազարուիլ:

—Եւ, ի հարկէ, պառող բաժինը Նասիր-բէդին էր հասնում:

—Մի օր էլ՝ ողջ Դարալազեազի բնակիները՝ հայ ու թուրք իրանց սրբի ցանկութեան հակառակ՝ թուղթ տուին դիւանին, որ Նասիր-բէդին մէջալ բերուի ու սար զնացած ժամանակ իրանց վրաց էլքէզի կարգուի:

Էն օրից էսօր՝ մեր Նարաբաղի բոլոր սարւորները հանգիստ չունին. ճանճ չի բզրալ մէկի դանը, որ շուն Նասիրի ականչը չընկնի ու նրա ձեռքով դեղ չը համնի:

Ամէնքիս ճարը կորուել է, սկսել ենք կեղծաւորաբար հետք բարեկամութիւն անել: Ի հարկէ, դժուար չէր օրին մէկն այդպիսի ճիճուին սարկայնելը, եղունգի ծայրի չափ բոլորակացրած մի կոտր արճիճ էր ու դրա ջանը, բայց խորամանկ սարանէն իր դլսի հոդն առաջուց էր քաշել: Ամեն դարի՝ երբ որ նոր սար եկած էլքէզիներն ու ժողովրդի սպարուելի առաջաւոր մարդիկն՝ իրանց կարողութեան չափ ընծաներ հետերն առած՝ զնում են որելական մեծաւորներին գրեսութիւնի, իշխանաւորի առաջին այն է լինում, թէ Նասիր-բէդին ձեր աչքի լուսի պէս պէտք է մրիկ դաք. թէ չէ նրա ամեն մի մազի փոխարէն՝ ձեր հօգութ ու նախիրները դաք, չէք ազարուիլ: Դարաբարկ սպառնալիք չըկարծես, երանալ բէզ, շեշտեց ու զեկիցս, մի անգամ մի հայ ձի հեռացել էր Նասիր-բէդի ջոկի միջից ու խառնուել մեր ջոկին: Խնչ եռ կարծում, քիչ մնաց, ոչ թէ միայն մեր համացնքին էր արգելում:

Հս սարերը ուզը դնելը, այլ բոլոր էլեքտրից ու հասարակութիւնից ձեռացաղիր առնուեց, որ եթէ նասիր բէզն իրանց մէկն ու մէկից անբաւականութիւն ցոչց ուաց, բոլորը միասին զրկուում են այս կողմերը սար գալու իրաւունքից:

Են օրից էսօր՝ նասիր-բէզն իր տանը հանգիստ քնում է, իսկ մենք՝ նրա հարևաններս նրան հովութիւն, նրա ապրանքին պահապանութիւն ենք անում: Երկնքի թռչունը սիրո չի անում մեր ահից, մեր սահմանի վրայով թե տալ անցկենալ, բայց անհծած նասիր խոզի հովիւներն արձակ համարձակ ցանդգնում են իրանց հօրերը քշել մեր արօդագեղերն ու որնազակ տալ: Եւ մենք սիրո շահելով միացն կարողանում ենք հեռացնել մեր տափերից մի հովուի լակորի: Ի՞նչ արած, էսօր նասիր-բէզն ձեռքն երկար է, մերը կարճ:

Մի մարդ կայ միայն, որից նասիր-բէզը դողում է, որը նասիր-բէզի աչքի իւղն առել է:

— Ո՞վ է:

— Գեղարքունցի թուլիթաշի Յունոն է էդ մարդը, որ տարեկան մի քանի անգամ նասիր բէզին մեծ վնասներ է տալիս, որովհետք նասիր-բէզը հայերին չի սիրում ու իր ձեռի տակի հայերին շար է նեղացնում: Մէկ-մէկ էլ իր մարդկանց ձեռովք Գեղարքունու հայ գիւղերից ոչխար ու տաւարներ է տուն քցում: Յունոն էլ հոգին հանում է. մի հաւել ճուղի փոխարչն, նասիր բէզի հինգ ձին է քաշում:

Դեռ գուցէ շատ երկար կարտայացրէր իրանց սրտի ցաւերը խօսակիցս, եթէ հեռուից դասնի չափ մարդիկ մեզ չըդիմաւորէին վրանախմբից 200 քայլաչափ հեռաւորութեան վերաց:

Նրանք նասիր-բէզի հպատակներից էին, որոնք հեռուից նկատելով մեզ՝ ընդ առաջ էին ուղարկուել յարգանք ցոյց տալու:

(Ճ գիտէք, որ ըստ արտաքինին շորերով ես մեծ մարդ էի):

— Նասիր-բէզն անբաշտ է գտնուել հրամանոցդ լոյս երեսին արժանատնալուց, խոր գլուխ իջեցնելով յայտնեց ինձ եկողներից մինը. նա գնացել է գաւառապետի մօտ և յայտնի չէ, թէ երբ կը դայ. բայց մեր տիրուհին—նասիր-բէզի սիրելի ամուսինը մեզ՝

հրամանոցդ ծառաներին ուղարկել է քեզ խնդրելու, որ բարի ոպ-  
քովդ մեր երեսը արորելը չըխնայես:

Յաւ եղաւ ինձ, ի հարկէ, նասիր-բէգի բացակայութիւնը-  
բայց և այնպէս, սիրով հետեւցի հրաւիրակներիս և իջայ վերլ-  
յիշած սիզաւէս գեղումը՝ նասիր բէգի լնարանեկան վրանից ոչ  
հեռու:

—Բարե՛ ես եկել, մեր գլխի, մեր աչքի վրայ ես շնորհ բերել,  
ազիզ բէզ եղբայր, լսուեցաւ վրանի միջից մի կանացի քնքոյշ ձայն,  
սրտիս վարդի թփի երեսը մի բարակ և քօղ սարածուեց, որ իմ  
զլիսի տէր նասիր բէգն էս րոպէին հրամանոցդ ղուլլուղին ըբգըս-  
ուեցի Բայց եթէ էս գիշեր մեզ մօտ հիւր լինելու շնորհն անես,  
և քօղը կը պատուի ու բացուած վարդերն իրանց անուշ հոգովը  
մեզ կը զմայլեցնեն:

Ասիական քաղցրախօսութիւնին Դժուար էր ինձ նոյն ոճով  
պատասխանելը, բայց ես մի պեսակ այդ Դժուար Ղրութիւնից  
ազարուելու ճարը գրայ:

—Այս, ինձ համար էլ մեծ ցաւ է նասիր բէգ եղբօրս հետ-  
ըհամբուրուելը, պատասխանեցի Դէմքս Դէսի վրանը Դարձրած,  
բայց եղբօրս վարդի թփի վրայ բազմած բիւլբիւլի անուշ կլկոցին  
(Դալայլիկին) արժանանալով ես ինձ միանգամայն բաղդաւոր եմ  
համարումն Եաւ ու շափ ուրախութիւն ու սրտի հաճոյք էր,  
ի հարկէ, իմ քոյր բիւլբիւլի քաղցր երգով երկար ժամանակ զմայլ-  
ուելը, բայց, տարաբաղդաբար, պաշտօնս զրկելու է ինձ այդ բաղ-  
դից: Ես միայն կը խնդրէի սիրելի քրոջիցս, որ ինձ խսկոյն ճանա-  
պարհ Դնելու իմասրուն կարգադրութիւնն անէր:

—Փաաաահ, էդ ինչ խօսք է, մինչև որ ազիզ բէգ եղբայրս իր  
խօնարհ քրոջ ձեռքով պատրաստած մի կրոր նոր մորթած գառան  
խաշլամայ անուշ չանի, նրա սիրոն Բնչպէս սիրոի տանի էն ցա-  
ւերը, որ աշախինդ սիրոի քաշի քո գնալուց յեպոյ: Երեխոնէք,  
ձայնը հրամայականի փոխեց նասիր բէգի կինը, ուղղելով իր խօս-  
քերն առջես շարուած իր սպորադը եղանակներին, բէգ եղբայրս կապակ  
է անում, սա իր քրոջ սիրով չի տիրացնիլ, շնոր, գառը մորթե-  
ցէք: Ենւու, կրկնեց տիկինը, միտքս հօ հասկացաք, գառներն երկու  
քայլի վրայ արածում են, ընդունեցէք ամենից մսորն ու վիզը Դա-

նակ քաշեցէք։ Միթէ դուք չըգիտեք, որ իմ ուկը նասիր բէզը մեր զլիխն կրակ կըթափի, մեզ դառան փոխարէն շամփուրը կը քաշի, կը խորովի, երբ որ իր բարի ոպքովը գայ և լսի, որ մենք մեր բաղդը ձեռաց թողել ենք, թառլան (բազէ) եղբօրս թռցրել ենք։

—Որքան էլ սիրուն կաքաւի քաղցր կուղկուգուն լսողի խելքն է բանում, բայց եթէ ժամանակն և ղուլլողը չեն ներում, ինձ պէտք է այս անգամ ներես, պատրասխանեցի ես Եթէ Ասպուած արժան կանի, մի ամսից այս կողմից անցնելու միզք ունիմ։ այն ժամանակ, եթէ դուրս էլ անէք՝ չեմ գնալ, մինչեւ քրոջս պատրաստած անմահական շարբաթով սիրոս չըզովացնեմ։

—Իսկ դուք, դարձայ Ահմագ բէզի որդւոցը, որովհետեւ նասիր բէզը բանը չէ, որ նրանից ապահովագիր Փանէիք ձեր հօրը, ահա առէք իմ կողմից այս երկոուլը և գնացէք։ Զեր հայրը կարող է անհանգիսու լինել։

Ծոցագետրիցս մի թերթ կորեցի, մագիստրվ խզմզեցի, պուի ուղեկիցներիս և շնորհակալութեամբ ճանապարհ դրի։

Շար դիմադրեց նասիր բէզի կինը, բայց երբ համոզուեց, որ գիշերելու մրադիր չեմ, սրիպուեց հրամանել իւր սրորադրեալներին ծառալիս հետ միասին գնալ և ամարանոցականների միջից երկու ուղեկից ձիաւորներ բերել։

Տիկնոջ հրամանաւ բոլոր կանգնողները, որոնք մեծ մասամբ համայնքի առաջաւորներից էին, թողին և հեռացան։

—Ուրեմն հրամմէ՛, հանգստացիր այդ բարձերի վրայ, ձայն դուեց ինձ վրանի բակից տիկինը, մինչեւ ձեզ ճանապարհ դնելու հոգսը քաշուի։

### ԺՀ.

Բնութեան մէջ ամէն ինչ ներդաշնակութեամբ միմեանց հետ շղթայանման օղակուած են, ոչ մի ճարդարարուեար ճարդարագէտ իւր բնական հանճարի ճարդարութիւնը ճարդարահմուտ կերպով գործ դնելուց յեպոյ՝ չի կարող այնպիսի կարգ ու կանոնի, այն ասրիճան համաչափութեան վերածել իւր ձեռագործը, ինչպիսին մենք

գեղանում՝ ենք բնութեան ամենամեծ ձարբարտապիտի բնակերտութեան մէջ։

Ահա բարձրանում՝ ես երկնահաւասար լեռների կատարները։ Դիտիր հեռաւոր երկար դժի վրայ շաբք ընկած լեռնաշղթան և կը դեսնես, թէ Բնէ կանոնաւորութեամբ և ասփիճանաբար ամենահարթ դաշտավայրի երեսին հազիւ նշմարելի փոքրիկ թմրակի դժի վրայ՝ որոշ հեռաւորութեամբ բուսաւ մի նոյնանման, բայց աւելի բարձր թումբք. դարձնալ լարում ես աչքիդ տեսողութիւնը և նոյն հորիզոնական գծով թումբք բլրակի, բլրակը բլրի, բլուրը սարաւանդի, սարաւանդը սարի հետ դրացութիւն անելով կազմուեցաւ մի կանոնաւոր լեռնաշղթաց, որոնք սանդուխիքի ասփիճանների նման՝ մի որոշ չափով միմեանցից բարձրանալով հասցնում են մրաւոր բարձրացողին մինչև ամենաբարձր կատարը և հակառակ կողմից նոյն համաչափ աստիճաններով իջեցնում մինչև հանդիպակաց դաշտավայրը. այն միայն բարբերութեամբ գուցէ, որ մի կողմի լեռնաշղթան անփառացին է, միւսը ապառաժուոր կամ խորաւէպ, մէկ կողմից շնչքիդ համար հասպարուն գերաններ և վառելափայտ ու կպչան անելու խոիւ ես սպանում, միւս կողմում հարիւրաւոր հօփունափառ իրավունք ու նախիրներ են կերս կրւում։

Լեռնացին համաչափութիւնը պահուած է և լեռնահովիրների և ձորերի ու ձորակների մէջ։

Նար զեղ իրար հանդիպակաց երկու երեք լեռնաշղթաներ են արարածուած համանման համաչափութեամբ, որոնց միմեանցից հեռացնող հովիպներն իւրաքանչիւրն իւր միակերպութիւն հետ պարուան ամէն մի եղանակին, օրուան ամէն մի ժամին ու ժամանակին իւր բարբեր պապաւորութիւնն է թողնում այցելուի վրայ։

Նար չերկարացնելու համար՝ մեր պատմուածքին դաւնողով ասենք, որ երկու միագիւսակ լեռնահովիպներ էին Ահմօ և Նասիր բէղերի վրանախմբերի բռնած դաշտահարթ պափարակները, որոնց իւրաքանչիւրն իւր առաւելութիւնն ու պակասութիւնն ունէր և ամէն մէկը նրանցից այլ կերպ ազդեց իմ վրայ։

Ճաշուաց շոքի խստութիւնը մեղմելու յարմարութիւնը բնութիւնից պարզեւուած էր Ահմօ բէղի ընբրած ամարանոցին, իսկ երեկոյեան պահու և զիշերացին ժամերի հովի քալցրութիւնն

առաւել զգալի էր Նասիր բէգին յարկացրած լեռնահովտի վրայ: Ի՞նչ մեղմ ու թարմ զեփիւռ էր խաղում օդի մէջ հարաւեց հիւսիսի ու լլութեամբ. ի՞նչ քաղցր էր հնչում ականջիս կանաչասէր, գերնաթռիչ լորերի ու արբուգների ճիգճոցն ու ճռուղիւնը՝ միացած առուակի խոնոշիւնի ու մեղմառունչ չփչփոցի հեր:

Որքան և կոշտացած ջիւրի, խողանացած կազմուածքի և բթացած լսողութեան ենթակոյ լինէր մի անձնաւորութիւն, չէր կարող չըդիմադրել իւր բնական պակասութիւններին:

Բայց որովհերև բնութիւնը շարուրի թւում ինձ ևս չի զըր կել հոգեկան վայելչութիւններ ներշնչող զգացմունքներից, ես շատ ուրախ եղայ, որ Նասիր բէգի հիւրասէր և պարբասակամ ամուսինն իրաւունք փուեց ինձ մի առժամանակ հանգստանալ: Եւ Բնչ ասել կուզի, որ ինձ նման ամբողջ օրը ձիու վրայ յօդնած ու խոնացած ճանապարհորդին բնութեան արարչի սիրելի երգիւների անոյց դաշլայլիներն ու երեսին խիող զովացուցիչ զեփիւռիկը հոգեկան գուարձութեան հեր մարմնական հանգստութիւն ևս կը պարբառէին. քունն է ամենից թանգարին բարիքն այդպիսի դէպքերի համար: Ամենամեծ բաւականութեամբ ազարուելով որիկնոց հաճոյախօսութիւններից՝ թիխնցի բարձին:

Անզգայաբար ձեռքս ինքնին դուրս է եկել քներակիս պակից և բնութեան քաղցրահնչիւն դայնակների օրօրի ներքոյ քունն աշքերս փակել է:

Բայց ափսոս, չեմ կարծում, թէ երկար միջոց զուարձացած լինիմ անուշիկ երազների մէջ: Անիծուին ականջիս զգայուն թըմքուկները, ամէն մի նուազ հնչոցից զրգուում են. կարող էին ուրեմն անորաբեր գրնուիլ թռչնիկների, հովի ու ջրի կլկլոցներից աւելի քաղցրահնչիւն մելամալճիկ ու սրբագրաւ պարսկական բայաթու ձայնի դէմ: Քնակոլոյ աչքերս յետ են բացում և ականջիս հեր միացած՝ ուղլում դէպի դիմացս փնկուած կանացի մենարանը՝ Նասիր բէգի կնոջ վրանը:

Ոչ մի նուազաբան, ոչ մի բանական և անբան երգիչ չէր կարող այնքան քաղցրաձայն հնչել իւր երգը, ինչպիսին լսում էր վրանի բակից, որ անորաբակոյս ինձ սիրաշահող աներեւոյթ պանդիրուհին էր և ոչ այլ ոք:

Ահա ինչ էր երգում նսախր-բէդի բանական բիւլթիւլը՝  
«Ազիղի, աղայ գեալ, աղամ գեալ,  
Օյլմամիշամ, սաղամ, գեալ,  
Բոյլումդա լամ զանջիլի,  
Ղափնդա դուսսաղամ գեալ»:  
(Աւելի լաւ է հայացնենք).

Ազիզս, իմ տէրս, արի,  
Մեռած չեմ, կենդան եմ, արի,  
Վզիս արիւնի շլթայ  
Դրանդ գերին եմ, արի:

Մինչ ես սթափուած քնից՝ ուշադրութեամբ ականջ էի դնում՝  
վերջին տողի հետ յանկարծ յետ բացուեց հարեմ-վրանի դռնակի  
վարագոյրի փէշը:

Մի առասպելական յաւէրժահարսն, պարսկական տարազի մէջ  
մի յունական աստուածուհի, մի հարշագեղ ու աննման նոր կթուած  
այծի կաթի սպիրակութեամբ, կասուուակնեայ կարապի աղումազի  
քնքշութեամբ գեղեցկուհի, փլոսկրի ճերմակութեամբ կուրծքը մինչև  
կէսը յետ բաց արած, իրան-Թուրանի կանացի կարճ ոսկեթել բե-  
հեղեայ արխալլի մէջ՝ թիկնած էր թաւշեայ բարձի վրայ և իւր  
փոփալից աչքերով սիրային ակնարկներ և օդային համբոյրներ էր  
բաշխում ինձ. հետն էլ գոլունի սիրապարփ ու խորամանկ ժպիտով  
սատաֆի պէս փայլուն մարգարաշար մանրիկ արամերն էր ցոյց  
դրալիս:

Շուր շուր էլ ձեռքերով, իբրև թէ համեստութիւն համարե-  
րվ, ու լլում իր իր հագուստի նսգուածքը:

Բայց ով ծանօթ է պարսկական կանացի հազուստի տարազին,  
առ առանց բացարրելու կըմբռնի տիկնոջ գործողութեան գաղտնիքը:

Նորարի պարսկուհին շատ լաւ հասկանում էր իւր հագուստի  
թովիչ յափկութիւնը, և անփութութեամբ և անուշադրութեամբ,  
իբրև թէ, չէր էլ մրածում, թէ կարող էր ուրիշներին գայթակ-  
շութեան պարճառ դառնալ:

Նրա կերպասեայ արխալլի և ոսկէ ժապաւէններով բոլորուած  
գեղին նուրբ մետաքսեայ կարճ շապկի երկայնութիւնը փորի կէսից  
ցած չէր անցնում, իսկ ծիրանեգոյն բեհեղեայ շրջազդեստի կապն

ամրացած էր կողաշաբքը վերջանալուց անմիջապէս յեփոյ; Հետեւարար՝ մի ձեռնաշափ լայնութեամբ բաց մերկութիւն մնում էր շապիկ և շրջազգեստի մէջուելը, որը կորացած ժամանակ ծածկում էր ուրիշի աչքից, իսկ ուղղուած ժամանակ փայլում էր իւր բոլոր արդաքինով՝ միջակէտում ուշադրութիւն գրաւող կլորիկ փոսիկով. աւելի պարզ ասած՝ պորտով:

Զըքաշուեց գեղեցկուհին. նա հերզհետէ լայն ասպարէզ լոռեց իւր մոլեգին կրքին:

—Ի՞նչ ես խամ կապած, սանձի ուժին ու թամբի ճնշումին անծանօթ ու անփորձ խրդնած ձիու քուռակի նման աչքերդ վրէս չուել, յանդգնեց դառնալ ինձ նասիր-բէգի կինը. վրանի շուաքում ու ծածկերի տակ թագցրած, արևի երես չըգեսած թուրքի կնիկ եմ, բայց զուլլուղի մարդկանց համար էնպէս զժուած եմ, որ եթէ վրանիս պարերի վրայ դիմամբ բացուած աչքաչափ փոքրիկ ծառկերն էլ չըլինեին և բարակ կրաւէ վրանի փոխանակ եօթը լուակ հասու պարիսպներով շրջապարած մութը բանդում փակուած լինէի, դարձեալ կարող էի սրտի աչքերով քեզ տեսնել: Հէնց որ դու սարի միւս երեսից մեր կողմը շրջուեցիր ու ինձ իմաց գուին, թէ դիւանի մարդ է զալիս՝ աչքս դէմ լուսի վրանի ծակին և երկու ծնկների վրայ չոքած՝ ճանապարհ պահում էի, մինչեւ եկար ու դրանու իջար: Սիրբա բարկո թիւնից քիչ էր մնում թանձր ամպերը պարուղ, աշխարհ սարսափացնող կայծակի պէս որոպար ու կրակ թափէր չորս կողմդ հաւաքուած մարդիկների գրլիսին, որ զետնի տակն անցնէին ու ես կարողանալի հետդ խօսել և իմն ինձ հասաւ, մինչեւ մի տեսակ նրանց այսպելից հեռացրի:

Նասիր-բէգի կինը փլակեց ու սկսեց հեծկլրալով արդասունք թափել,

—Իմացիր, քարասիրո անիրաւ, գոշեց նա, սարի չափ սիրած մի ընկուզի չափ եմ շինել, ըուոդ եմ կոխում: առ, ջարդիր ու միջուկն անուշ անուշ կեր ու կուլ դուր: էլ ընչի ես ուշանում: Նասիրն էս գիշեր չէ հգուց մինչեւ իրիկուն էլ դժուար թէ վերադասայ. բաշդդ իր ուզբո՞լ եկել է ուզբիդ տակին թաւալում, իուզ դու ընչի ես աքացի դալիս, յետ շպրտում:

Ես լոել եմ և ապուշ կտրուած մահապարտ յանցաւորի պէս  
գլուխս կախել:

Հոգեբանօրէն եթէ դադենք, կամ նորահաս անփորձ պատանի  
պիտի լինէի, կամ երկրորդ երիտասարդութիւնից ծերութեան  
սահմանն անցնող գծից որք դուրս դնող ալեոր, որ գրաւուէի մի  
յիմար բարփածուից:

—Աչքերդ ցած մի՛ բռնիլ, գլուխդ վեր բարձրացրու, մորիկ  
գուր լոյս արեգակ պագկերիս, կաղմ ու կապսիս, հպարտ-հպարտ  
ժպաց պարսկուհին. չափ ու ձեւ արա, ընչճկ պակաս եմ ես արեկ  
բակին այրուած ու սեւացած քաղաքացի սիրուններից:

Այսորեղ յանդուգն գեղեցկուհին տեղիցը կանգնեց, սիրապանծ  
երկարավիզ եղջերուի գոռոզութեամբ՝ զլուխը մի կողմի վրայ թե-  
քեց, լայնաթեղոց թեւերը յեպ ծալեց, հոլանի փղոսկրեաց թեւերը  
վեր քաշեց, կիսամերկ կուրծքն և փորը վահանաձև դուրս ցցեց,  
որքի մէկն առաջ և միւսը յեպ դրեց, աջ ձեռքն օդում բարա-  
ծած՝ ձախ երկու բարակ մազների ծայրով ձիւնափայլ ըովախի  
նուրբ ու քնքոյշ մորթից բռնեց, առասպելական դիցուհու կի-  
պարանք առաւ և ասաց.

—Զըկարծես, թէ գեղեցկութիւնիդ կամ ջահէլութիւնիդ վրայ  
եմ խելքամալ եղել. Խրան. Թուրանի խան ու խանզադէքն էլ եթէ  
գլուխները որքիս բակը դնեն, իրանց եօթն յարկանի քեօշք ու  
սոկի ջաւահիններն ինձ փէշքաշ անեն, բոլորի վրայ հաւասարա-  
ուէս կը թքեմ ու երեսներին նայելն արժան չեմ համարիլ. Ամենքը  
միասին թող մափաղ լինին իմ սարի պէս բարձարդ՝ զլիսիս ունի  
հասիր-բէգի հար մազին. Բայց էն օրից, որ նասիր-բէգը մօքս  
գողել է լուլուղի միրզաներից մէկի սիրուն, երեսը բաց խանումին  
և ասել է, որ ինքն ամեն գնալով նրա մօք համարձակ ել ու մուլ-  
ունի, մարդի բանը չեղած ժամանակը ժամերով հետը սէր ու  
սոհբաթի է բռնւում, էն օրից, էն բերան պարուած՝ ամօթ ու պար-  
կաւանք կորցրած խանումն աչքիս փուշ է դառել ու սիրոս ծա-  
կում. հէնց էն օրիցը՝ մոքումն դրել եմ էդ փուշը կրակել, ինքս  
սուր նշրար դառնալ, նասիր-բէգի լերդ ու թոքը պարուարիլ.  
ուզում եմ մի ժամ, կէս ժամ, թէկուզ մի բուժ լուլուղի մարդ-  
կանցից մէկի հետ սէր ու սոհբաթի բռնուել, թէկուզ էն լուլուղի

մարդն առաջինն ու գլխաւորը չըլինի, վերջին միրզէն լինի: Հիմք հօ ինձ հասկացար, ասա գետնեմ խօսքդ թնչէ, կամք պալիս ես էս գիշեր յետ ընկնիլ, որ լրկեմ, չըթողամ ձիաւորներ դուրս գան ու հացի պատրաստութիւն գետնել բամ: Ասա, քարասիրու զազան, թնչ ես ամպած երկինք դառել զլիս հօ կարկուր թափելու միտք չունիս. կուզես՝ լզլբաշի կնկայ ամօթը յետ դնեմ, օրով յերեկով չոքէ: ոգքերդ ընկնեմ:

— Օ՛հ, ծհ, ծհ հեկեկաց դարձեալ խանդուր պարսկուհին ծունկ չոքելով իւր վրանի բակ:

Չմերային մառախամած թանձր ամպերի պատահական ճեղք-ուածքի միջից բոպէաբար ալօս ցոլքն երկրի երեսին բարածող գունադ և թոյլ արեգակը որ ասորիձան կարող է վրդովել ամիս-նորով նստած, սառոցց կրուած գաղաչափ ձիւնի թանձրութիւնը. նոյն և մի ազդեցութիւնը թոյլին ինձ վրայ խանդուր պարսկուհու աշերսանքներն ու արդարացուցիչ գայթակղական պարմառաբանութիւնները:

— Առաջին՝ շիլ ու հիւանդուր աչքն ամէն ի՞նչ սլսալ է տես-նում, լուրջ պարասիսան բուի տիկնոջը. բարակ թուղթը նրան երեւում է գոմշի հասպ կաշի, իսկ մի կնոջ զլիսից սանդրուածքի ժամանակ պոկուած մազը գութանի ճուղան: Հիմի դու ինքդ ես հիւանդուր աչքը, մէջդ բուն դրած ու լոյի նախանձն ու խանդո-պութիւնը քո առողջ հոգին ցեցի պէս քըքել են, ամէն բան ձեր փթած պարանովն էք չափում. ամուսինդ մի ասորիձանաւորի կնոջ երես գետել է ու եկել մօրդ պարծեցել, թէ գիշեր ցորեկ ամէն գնալուս իր պէս մի հասարակ թուրքը այն տիկնոջ կողքը կրած նստած է լինում: Թէ դու ես սիսաւում, խանձր, թէ քո պա-դուական ցիմար մարդը. լաւ իմացիր, ոչ մի օրինաւոր հասկացող կին ոչ կը քաշուի պամարդի հետ խօսելուց, ոչ երեսը նրանից կը ծածկի և ոչ ամէն մի հանդիպողի մարդարել կը դնի:

— Եդ առաջին, երկրորդ թնչ, հարց պուեց լրջմբաբար ուշքը գլուխը ժողովելով պարսկուհին:

Երկրորդ, կարծիքովս ես քեզ մի մասով արդարացնել եմ ինձ թոյլ բալիս. ես ուզում եմ հասարակ համոզուիլ, որ դու քո մար-դին չափաղանց սիրում ես, և որովհետեւ սիրոյ աչքերը կոյը են,

իսկ կոյրը միշտ աչքածակ կը լինի, ինչ թանգագին պարգև ու գանձ էլ տաս իրեն, նա կը կարծի, թէ ուրիշինն իր ունեցածիցն աւելի գնոջ է ու լաւը: Հիմի դու բաղդի ձեռքով քեզ վիճակուած Նասիր բէզի պէս քաջ ու ընտիր մեծամեծների ու աշխարհի սիրելի իդիթ աղայ որդամարդից առաւ ել գերակշռութիւն ես փալիս որ և է հասրակ դրագրի, որովհետեւ խանդուութիւնը քեզ կուրացրել է:

—Ասածներից էսքանը միայն գլխումս նսպեց, որ նախանձն աչքերիս առաջը մի հաստ թաղիք է քաշել, որ սուրբն և ուղիղն իրարից զանազանել չըլիարողանամ: Բայց մինչև Նասիր բէզից երեսը բաց խանումի վրէջը չառնեմ քեզ պէս մի դուլուղի մարդի ձեռով, իմ հոգիս պիտի հիւանդ մնայ, իմ աչքերս պէտք է ձմարիո լոյսին չարժանանան: Թէկուզ հողեղին չըլինիս, երկնքից ցած եկած հրեշտակ լինիս, էս բուէին դու մարդի կերպարանքի մէջ ես, ինձ համար մորդ ես, իմ հիւանդութիւնը բժշկով, իմ աչքերը լուսաւորացնող բժիշկը դու ես, որ ձեռքս ես ընկել. երեք որառոց աւելի է՝ քեզ պէս մէկին սպասում էի, հիմի ճանզս ես ընկել, ձեռքիցս ազարուողը չես:

Թշուառ կին, իւր երկար ժամանակից փայփայած յոյսը լուսակէս համակեց նրա ամբողջութիւնը և վայրկենաբար յօդս ցընդեցաւ. մի ոգի եր այն մարմնացած, որին ձեռքով դեռ չըօշափած՝ չար կախարդի մոգական գաւազանի շարժումով աներեսութացաւ. իսկ յուռութքը վերլուծող անդիմադրելի ոյժն իր փոքր ժամանակ առաջ արձակած հրամանն էր:

Իւր պատուիրանով զինավառուած երկու պարսիկ էին նրա յոյսն ի դերեւ հանողները, որոնք ծառացիս հետ միասին ձիանքը քշելով, եկան վրանիս առաջին պատրաստ սպասեցին ինձ ուղեկցելու:

—Ասելն աւելորդ է. որիկինը վաղուց ցած էր թողել վրանի դրան փէշը:

—Ուշ է, օրը որարաժամ է, երանալ, խոնարհ գլուխ որուեց ուղեկիցներիցս մէկը. շրապիր, մութը չըկոխած հասնենք՝ Գ. գիւղի ամարանոցը. մենք վերադառնալու ենք:

—Այսպել էլ երանալը, խոժոռած շշնչացի՝ ծառայիս կողմը դառնալով:

—Լոյս կորի որէր Մ-ի փեսայի հէրը, քչփաց ծառամս, իբրև

թէ ու շլելով հագուստս, բայց ըստ էութեան՝ իւր պարմելիքի հերքը կորցնելով, էդ խօսքն ասում եմ թէ չէ, բոլորի թուքը բերաններումը ցամաքում է; Էսփեղ երեսիդ պապիւ էին տալիս, բայց հէնց որ գնացինք ձիաւոր հանելու, վրէդ հազար ու մէկ հաշոց բարձ. բացաւ: Ամէն մի լուլուղի Դրանը քարշ եկող դալիս է մեր դլիսին չագում է կորում, միթինթում էին սարւորները. մենք ոչ ձի ունինք, ոչ ձիաւոր, մի անհասկացող կնոջ խօսքով մարդ չենք չօլերը քցիւ, թող էս գիշեր էսփեղ մնայ. մինչեւ էգուց նասիր բէդը կը գայ, կը տեղեկանայ ո՞վ է, ինչ մարդ է, յեկոյ թէ կուզի՝ հարիւր ձիաւորով ճանապարհ քցի:

—Յեւո՞յ:

—Ձեր տունը քանդուի, ասացի, ուզում էք ձեր դաւար ոչ խարով ամառուայ արեգակի տակ, Մուղանայ չօլումը, Արազի աւազուրներումը բապակութք. ախար սա ինքն է ամենքից մեծ թորփաղ-երանալը, հիմի որ ուզի, ձեր անսառնների ունիները կապիլ կը գայ, մի չօփ չի թողալ, որ բերանները մինիւ:

Թորփաղ-երանալ խօսքը որ լսեցին, շարունակեց ծառաս, իրաբոցով դիպան ու կէս սհաթի մէջ ունչ ինչ գողամարդիկ դուրս բերին:

Մինչ այս, մինչ այն, վրանի երեսից կանաչի վրայ արօպի կապած ձիս արձակեցին նասիր բէդի ծառաներն և յառաջ բերին:

—Մնաս բարին, խանում քննը. ձին հեծայ և երեսս շրջեցի դէպի սիրագուոր խանդավառ կնոջ վրանը:

—Ուրեմն, բէդ եղբայր, բարձր ձայնով պարասխանեց ինձ վրանի պակից նասիր բէդի կինը. ինչ կը հրամայես, որ աղախինդ պարասխան առաջ իր գլխի տէր, քաջերի քաջ, մեծաւորների սիրելի, իր էլալթի (համայնք) պաշտպան նասիր բէդին: Նա ինձ երեք օր քաղցած կը պահի, չորս գիշեր անքուն կը թողնի, որ շնորհք չունեցայ քեզ նման երկնքից մեզ բաղդ ուղարկուած ազիզ հիւրին մի սառը ջրով պարուելու, մի գիշեր մեր աշխատ ծածկի դակ հանգստացնելու:

Աղաչում եմ, ազիզ բէդ եղբայր, մի գիշերուայ անհանգստութիւնդ քո պատիկ եղբայր նասիր բէդին բաշխիր, եթէ ինչպէս սառնասիրա դրամարդ չըբարեհաճեցիր նրա աղախինի խնդիրը ուշադրութեան առնել:

Բարձր ձայնով հասր հասր ամէն մի բառի վրայ որոշակի շեշտում էր տիկինը։

Անդարակոյս, ես ու ինքը տիկինն էինք հասկանում յիշեալ խօսքերի նշանակութիւնը, իսկ շրջապատած ամբոխի համար նրանք անկեղծ սրբից բլիսած հիւրասիրական մեծարանքներ էին, կամ պարսկական կեղծուպարիր շողոքորթութիւններ։

Եթէ ժամանակն ու պաշտօնս ներէին, պարտախանեցի ձիու վրայից, ես նասիր բէգի ծաղկանոցի վարդի հոփով զուարձանալն ինձ բաղդ կը համարէի։ Յագոնիր իմ ելբայրական ողջոցնը մեր սիրելի նասիր բէգին, ասա՝ թող դեռ մաքրի վարդի փշերն և այնպէս ապա հոփ քաշի, ապա թէ ոչ, շար փուշը սուր ծայր ունի, քիթ կարող է ծակել։ Մնաս բարին, խանում, մնացէք բարեւ, հասարակութիւն։

—Ասուուած բարի ճանապարհ տան, դլուխ իջեցրին ժողովրդի ներկայացուցիչները, բայց ոչ ես և, կարծեմ, ոչ ինձ ուղեկցող առաջիցս գնացող թուրքերը լաւ չըլսեցինք վրանից իմ հասցէին ուղղած խօսքերը։

Միայն ծառացիս ականջներն են սուր եղել, նա մեզանից շար յեր էր։

—Լսեցիր, աղայ, թուրքի կնկայ վերջի խօսքերը, մօտեցաւ և հարց տուեց ինձ Միքայէլս։

—Ի՞նչ ասաց։

—Զհանդամը գնամ, զոռաց քամակիցդ լիրք կնիկը, լողի դլուխը խալիչի վրայ կենալ չի։

Ես ժպատցի ու ձիս կրնկեցի։

### ԺԹ.

Մենք անցել ենք Փալանթօքեանի լեռնաշղթայի հիւսիսային երեսի հովիտը և բարձրանում ենք Գեղամայ ծովալիի հարաւային կողմի լեռնաշղթայի կապարը։

Եթէ ես ձանձրացել էի, բայց ծառացիս մէջ երիփասարդական աշխոյժը մեռած չէր, նա մէկ մէկ ոգեսորւում էր և վստահանում իմ ուշադրութիւնը գրաւել դէպի բնութեան սիրուն դեսաբանաները։

—Աղայ, աղայ, գլխիդ մագաղ, մի յետ մրիկ դուր մեր էս օրուայ անցկացած դաշտին, ուս ինչքան գեղեցիկ են կանանցների վրայ պնկորած հազարաւոր վրանները, կարծես գարունքուան անձրևից յետոյ դաշտի երեսին փռուող գերնասունիներ լինին, որոնց վրայ շողում է իրիկնասլահի ոսկեգոյն արևի լոյսն ու մրիկ դուռը աչքերը ծակիծկորում:

Փառքիդ մեռնիմ Աստուած, քանի քանի տեսակ սիրուն բաներ ես սրեղծել աշամորդու համար, բացականչեց ծառաս, մի դես ինչպէս պատուական ձորակ է ընկած նասիր թէզի օբաների ներքեւը:

Ծառայիս սիրով չըկուրելու համար՝ յետ նայեցի, բայց բնութեան հրաշալիքներն իրանք իրանց մոռացուեցան, երբ յանկարծ խլրումն ու շփոթն ընկաւ յիշեալ վրանախմբի մէջ. աշմուկ ու աղաղակ, ճիչ ու հարայ հրոց օդը բարձրացաւ և ամէն կողմից գոռում էին.

—Տարան, տարան, նասիր թէզի ոչխարի հօտը քշեցին, տարան, դունը մէկդ կաք՝ զէնք առէք, օգնութիւն հասէք, դասը կաք՝ դուրս եկէք:

Նիփթ բարձրացնողները չորս հինգ հովիւներ էին, որոնք առանց հովուական վերարկուի ձորակից դուրս վազելով՝ շփապում էին դէպի վրանախմբը:

Սյաքանը բաւական էր խովզելու վրանաբնակների խաղաղութիւնը, ամէն միվրանից հրացանաւորներ էին, որ դուրս էին թափւում։ Մենք կանգ առանք և հետաքրքրութեամբ նայում էինք։

Տշամարդկանցը հետեւցին սարւորների կանաչքը. զեղջկուհի լեռնականները գոփոցների մէջ քարեր լցրած՝ շփապում էին դէպի դիմացի ձորակը։

Վերջիններին առաջնորդում էր մեր ծանօթ խանդու թէզուհին։ Նասիր թէզի կինը մագով ցոյց էր տալիս քաջ պարսկուհիններին ձորակի միւս երեսի լեռնաթմբի վրայ կանգնած հեծեալին, որը գնօրէնութիւններ էր անում ոչխարի հօտը քշող վեց եօթնի շափ ձիւաւորներին։

—Տես, ինչպէս է տեղին ու ժամանակին վրէժ առնում անիծածը։

—Ովկէ ակնարկոծդ ձիաւորը, տղայ, հարցրի ես անէծք կարդագոլ թուրքին:

—Ել ովկիտի լինի, Յունօն ինքնէ, էն ասլանի ձագ Յունօն, որ թէպէտ հայ է և շարունակ մեզ վնաս է փալիս, բայց հալալ է ծծած կաթը, դղամարդ է ու կորիճ: Ասործով ասած՝ Յունօն մեղաւոր չէ. նա Նասիր բէգից իր վրէմն է առնում: Տարի չի անց կենալ, որ Նասիր բէգը մի քանի հայ չըկորցնիլ փայ: Ահա քանի փարի է, որ աշխատում էր Դարալաղեազի է. գիւղի տէրտէրի արել մընացնելու. ճանապարհներն էր կորել փալիս, փան վրայ էր յարձակում, դիւանին էր մաքնում, քնած փեղը գիշերն երթկովը գիւլլա էր քցում, բայց ոչինչ չըկարողացաւ անել. տէրտէրն իրան Նասիր բէգից աւելի քաջ էր. քէշիշը մի քարափի փակ նսրած մի հար այնալու հրացանով իր վրայ յանկարծակի յարձակուող Նասիր բէգի փասն արենիում ձիաւորներից երեքին սպանեց. մէկը հէնց Նասիր-բէգի հարազար եղբայրն էր. .

—Ի՞նչ օգուգ, որ վերջը Նասիր-բէգը յալթեց, ընդհարեց խօսդին իւր ընկերը:

—Մափնութիւնով մարդին անձար թողնելը դու յաշթութիւն ես համարում, պարասխանեց առաջինը. ողջ Դարալաղեազի թուրքերի կողմից սոււր սրորագրութիւններ ժողովեց Նասիր-բէգը, որ իբր թէ, տէրտէրն եասալների (մաքսանենդ) խումբ է պահում և Յսմանլուի հողը գնալ դալ ունի: Երեք անգամ դիւանը լսելն արեգերի փունը փակն ու վրայ արեց ու գլուխը փորձանքից ազար պահելու համար ունեցած զէնքերից աւելի ոչինչ չըգրաւ: Մի օր էլ՝ երբ տէրտէրը լսեց, որ իրան բանքարկելու մոտադրութիւն կայ, ընդունիքն երկու անչափահաս եղբայրների յուսով թողեց ու ինքն Արագն անց կացաւ՝ Ղզլբաշի հողումը գլուխ պահելու:

—Այդ բոլոր պարմութիւններն ես լսել եմ, միջամբեցի ինքս դիւմամբ. Յունօն Դարալաղեազի տէրտէրի հետ ի՞նչ կապ ունի, որ էսօր Նասիր-բէգի հետ թշնամացել է և հօտերը քշում է:

—Փորձամում ես, բէզ, թէ մեզ յիմարի փեղ ես դնում, վշար ցաւ թուրքը. մարդի սիրո ի՞նչպէս պէտք է համբերի, երբ որ գենի, թէ օփարն իր ազգին նեղութիւն է փալիս ու ինքը ձեռները ծալի նսրի: Մի Յունօ է, մի աշխարհք, մարդը մի քանի հոգւով,

ինչքան կարողանում է, խեղճերին պէտք դալ, չի խնայում, հայութ թուրք չըհարցրած՝ ամէնքին հաւասար աչքով է մորիկ բախտութեած օգնութիւնը չի խնայում: Եդակս մի քանի Յունոներ պէտք է լոյս ընկնէին, որ նասիր, Ահմօ ու շար խեղճերի արիւնը ծծող բէգերին մուկը շինէին: Ափսոս, որ հայերի մէջ Յունոյի պէս սրբուներ քիչ կան. Յունոյի երեսուն ընկերից, ասում են, կէսը թուրք ու քռւրդ են, իսկ մեր քաջերն էլ իրանց շահի համար են աւազակութիւն անում:

—Ես անգամ Յունոն երկու երեք շաբաթ առաջ նասիր-բէգի մարդկանց ձեռքով Գեօդչացի Վ. Ղ. գիւղից բարած ոչխարների վրէժն է առնում, խօսեց երկրորդ ուղեկիցս և պատմեց այն Դէպքը, որի մասին իմ ներկայութեամբ հայ գիւղացիք գանգափուեցին օդ-նականին:

—Դու մրգեղից գիւղես այդ մանրամասնութիւնները, հարց գուշի ես:

—Մելքս ինչ թագցնեմ, երանալ, նասիր-բէգի լրկած գողերից մինն ես ինքս էի. հրամայեց՝ չըկարողացաց խօսքը չըկարարել, ինքս էի, որ մի ճակատը ծաղիկ կարմիր մադեանի վրայ նսրել էի, ինձ Յունոյի տեղն էի Դրել և հայերին ասացի՝ գնացէք Դիւանին պարմեցէք, թէ Յունոն էր ձեր ոչխարները բանովը:

—Ուրեմն դու վփանգաւոր մարդ ես եղել, կարող ես էս սարերի մէջ մեզ նոյնալէս մնաս դրալ:

—Ասպուած ոչ անի, երանալ, ես էս րոպէին մի հրամանակագար մարդ եմ, նասիր բէգի անունով ինձ հրամայել են քեզ ողջ առողջ դրանել Գ. գիւղի ամարանոցը հասցնել, և գլուխս կը Դնեմ ու չեմ թողալ քո հար մազը գլխիցդ պակիս. մենք նասիր-բէգի իրաւունքի դական ենք, կասի ասլրի՝ կապրենք, մեռիր՝ կը մեռնենք:

—Մերոնք յեր Դառան, նկատեց ձիաւորներիցս մինն և յայտնեց ընկերին:

—Հապա չե, պիտի գնացին նասիր-բէգի ոչխարի համար կոտրուեին. չես գեսնմում, միայն նասիր-բէգի հօրը քշեցին, իսկ մերոնց բոլորովին ձեռք չըդրուին, պատասխանեց ընկերն և աւելացրեց, ինչ էլ յարմար ժամանակը դրան, նասիր-բէգն էգուց էլ չի գալ:

—Աղայ, Դարձաւ ինձ ծառաս, մգիկ գուր Դիմացի սարի գըլ-

իին կանգնած քրդին, նա Փալանթօքեանի վրայ մեր երեխից ընկողլը չէ. հէնց ինքն է որ կայ. մէ, յեզ շրջուեց, երևի ընկերներին է կանչում:

— Տունդ չըքանդութ, սարսափահար եկաւ և մորակով ընկերի կողքին հրեց Յունօյի անունով Վ. Պ., գիւղացոց սպառնացողլը. չես տեսնում, Յունօյի քուրդն է, հէնց հիմի սարի երեխից բոլորը դուրս կը թափուին, մենք կորանք... կը բաշխես, բէզ, ես գլուխս ազագում եմ... Մենք էս քրդի զարբը (ոյժը) գեսել ենք, Յունօյի խըմբի մէջ սրանից քաղջը չըկայ:

Եւ թուրքն ամբողջ մարմնով դոլ եղած՝ ձիու գլուխը շրջեց ու դէպի իւրեանց օքաների կողմը ներքե սլացաւ:

— Ես Էլ գնացի, բէզ, Ասրուած քո կուանը կենայ, մի գուն լիքը նրեխայ ունիմ, հաց տուողն ես եմ, խեղճ-խեղճ երեխս մզիկ դուեց երկրորդն և առանց իմ հրամանին սպասելու՝ հետեւց ընկերին:

### Ի.

Արդէն արդէն սկսել էր իր արծաթափայլ այրողու կարծ ճառագայթները զովարար ուկեփայլի փոխել ու իւր ներերի սուր ծայրերն երկարացնել ու բթացնել. լեռնային հով օդի մէջ սառնութիւնը հեղողներէ զգալի էր դառնում, ձիանց քրաինքը փրփրակալացնել. Գեղամայ ծովակից բարձրացած հիւսիսային սառնաշունչ խոնաւութեան զօրութիւնը մի քանի ժամաշափ դարածութեան վրայ իր ազդեցութիւնն էր գործել, բայց մենք ուղեկիցներիս կանխօրօք ասութեան համուձայն, դեռ հեռու էինք մեր ժամադրեալ Գ. գիւղի ամարանոցից:

Անել դրութեան մէջ էինք մնացել. երկու անծանօթ օփարական, լեռնահովտի մէջպեղ կանգնել մոլորուել ենք: Դիմացի լեռան գլուխն աւազակախմբի անդամներից մի քուրդ միայն երեսում է, նա էլ մեղ բոլորովին չի դեսնում, կամ գուցէ չի ու զում գեսած լինիլ. շուրջն ամէն տեղ աչք է ածում, իսկ մեզ չի նկարում: Մդածում եմ ձայն դալ ու կանչել, բայց նախ երկիւղ եմ անումք

երկրորդ՝ զուր կոկորդ կը ճշէինք, կէս վերսպաչափ հեռաւորութիւն կար, ձայն չէր համնիլ:

—Յետ դառնանք նասիր բեգի կողմն, աղայ, խորհուրդ դուեց ծառաս:

Ես անխօս գլուխս պարեցի:

—Զուրն ընկնողն անձրեց չի վախիլ, արի, վճռեցի ես և առաջ ընկայ:

—Աղայ, քուրդը, չըգիտեմ, ի՞նչ եղաւ, էլ չի երեսում ասրի դլիմն:

—Ասրուած իւր հետ, դու քշիր:

Ճանապարհն ուղղակի դէպի լեռան գլուխն էր բարձրանում. ոչ աջ էինք նայում՝ ոչ ձախ, գրասպներիս անխնայ մորակում և կրնկում էինք:

Լեռան ուղիղ կափարին ենք: Գեղամայ ծովակը հեռու մշուշի մէջ երեսում է. լեռների գլուխները ոսկիզօծուել են. գեսարանն սքանչելի է, բայց ես բնութեան հրաշալիքներով կշփացած եմ. ամիսներով չափածներս լեռ ու ձորեր են, իսկ հիմի, այս վրանգաւոր պահուն ևս առաւել ինձ համար անհետաքըթիր են: Խեղճ ծառաս երկիւղից դլուխն էլ մոռացել է: Կամաց-կամաց մութը գերինն առնում է, շրապել է հարկաւոր:

Լեռնային նեղ ուղին հազիւ է երեսում և իջնում է դէպի մի ուրիշ ձորահովիր: Ուր կուզի գնայ, մենք աչքներիս գեսողութիւնը լարած՝ քանի լոյս կայ, ոչ կանգնելու, ոչ շեղուելու հնք, կեանքի և մահուան ինդիր է:

—Աղայ, քեզ մասսալ, առաջդ լաւ մոիկ տուր, լաւ չափ ու ձեւ արա, էնպէս գնա, անվարահօրէն կակազեց ծառաս:

Հասկացայ, ուզում ես ասել՝ մեր ճանապարհը ճիւղաւորուել է և ես չեմ նկատել:

—Զես գեսնում, շլափիկ մարդի աչքերի պէս մէկը հիւսիս է գնում, մէկէլը Մասիս:

—Այ պղայ, որն է աւելի լայնը:

—Երկուսն էլ աղուէսի ճանապարհներ են, աղայ, լայն ու նեղ չըկայ: Ի՞նչ անենք, ուր գնանք, լացակրինած պարասխանեց ծառաս:

Յեփ նայեցի՝ խեղճի երեսին գոյն չէր մնացել:

—Դէհ, կերածդ հարամի, կէս բարկութեամբ, կէս հեղնօրէն գոչեցի ես. ուրիշ ժամանակ գլուխ ես ցաւացնում քո չունեցած քաջասրութեան մասին սնապարծութիւններ անելով, հիմի Բնէ ես մուկը դառել. ինչ որ ինձ էն էլ քեզ, քո արիւնը հօ իմիցը կարմիր չի, ողամարդի երեսին թուր խաղացնեն՝ երկիւլ չըպիսի անի. Աստծու անունը փանք ու աջ գնանք, կամ մի շէնի մէջ դուրս կը գանք, կամ մի քարափի տակ կուշ կը գանք, գիշերը կը լուսացնենք:

Ծառաս սիրո առաւ և ինձ հեգեցեց:

—Աղայ, էն մարդ է, թէ քար, որ սկին է տալի առաջներիս, ձորահովորի ծայրին եղած բլրակի ոլորապոյտի բերանին, խօսեց ծառաս:

Ծառայիս աչքերն աւելի սուր էին: Ճիշդ, ճանապարհի վրաց մի սպուեր էր երեսում:

—Մարդ, քար, զազմն՝ միւնոյն է, հրացանդ ձեռքդ առ ու եփելից արի, տնօրինեցի ես և իմ փոքրիկ հրազէնս ձեռքիս բըռնեցի ու ձիուն կրնկեցի:

—Աղայ, քուրդն է, Փալանթօքեանի քուրդը:

—Ո՞վ կուզէ, լինի, արի:

Այս, պարզ ճանաչեցի, քուրդն ինքն էր: Երկի նա նոյնպէս նկատել էր մեզ ու սպասում էր:

—Բարի երեկոյ, քանդ:

—Ասրծու բարին, աղայ. առանց տեղիցը շարժուելու և մեզ ճանապարհ բալու պատասխանեց քուրդը Գեղարքունցի հայերի բարբառով: Նա այս հարցը պատեց ինձ.—քեզի լուրբան, աղայ, էս մէր էք չօլքեասմայ բռնել էք, զնում էք էս մթին:

—Ընչի՞ է չօլքեասմայ (փրարանդի), չես գեսնում առաջներիս ճանապարհը:

—Միւրք ունիք Գեանջայ դնալու:

—Ո՞չ, նոր-Բայազիդ ենք զնալու և էս գիշեր Գ. գիւղի ամարնոցումն ենք քնելու:

—Նայ ես հեռացել, աղայ, Գ. գիւղի եայլաղը մնաց սարի աջ կողմը:

—Ուրիշն դու մեզ առաջնորդիր:

— Եմ երկու աչքի վրայ. ես հեռուից դեսայ ու հասկացայ, որ ճանալամոլոր էք ընկել, էն յոդի (այն պարճառաւ) կանեցի, որ ձեզ քար ու քարափից ազարեմն երևիցս եկէք:

**Քուրդն առաջ ընկաւ:**

— Աղայ, ձին շբապեցրեց, հաւասարուեց ինձ և քչփչաց ծառաս. աւազակի քամակից ընկած՝ հւր ես գնում:

— Արի, դիմար: Եռւր շուր քշի ձիդ, քուրդ:

Ծառաս լռութեամբ հեգեց, իսկ քուրդը պարախանեց:

— Զիերին ափսոս չես գալում ես, հա, հա, ճրադներ կը պլզպլզան, թափէն (բլրակ) իջնենք՝ հասել ենք:

Բլրակն իջանք և մթի մէջ մեր առաջ նշմարուեցին մի կարգի ընկած քսանից աւել քրդական վրաններ, կամ եղէզնապար թաղիքէ ալաշուլներ:

Վրանախմբի շները մեզ դիմաւորեցին հեռումը դնկուած մի հարիկ վրանի առաջին: Անշուշր մենք մեր գրասոների հետ զոհ էինք գնալու պարառող ընտրանի գաղանների սուր արամներին, եթէ մեզ առաջնորդող քուրդը վաշօրոք հարիւր քայլաչափ դարածութիւնից քրդերէն լեզուով ձայն չլրար և չզգուշացնէր վրանաբնակներին՝ շներին զսպելու համար: Ամէն մի շան առաջ երկու երեք յաղթանդամ քուրդ կորել էր և արգելում էր հաւագարիմ ոչխարապահների կագալութիւնը:

Եռւրով բոլոր վրաններից դրամարդկանցը հետեւեցին ձիթի կամ նաւթի թիթեղեայ ճրագլ ձնոքներին կանացի սեռը:

Մե՞ր իջած վրանի ընդարձակ պարածութեան վրայ հարիւրից աւել մարդ, կին, երիտասարդ, պարանի, մանուկ, տղայ և աղջիկներ ժողովեցան և ճրագները մեր քթերի ուսկ բռնած՝ քրդական լեզուով միմեանց հարցեր էին դալիս:

Զի՞է լայօ (ի՞նչ է որ) ճշում էր ամէնքի վրայ մեզ լեկավարող քուրդը. մարդիկ չեք դեսել, գոռաց նա հայերէն, երեխ մեզ հասկացնելու համար. քաշուէք, հեռացէք, Ասդծու սրեղծած ըանդա (արարած) են, մեզ լօնալ են, եկել են. մեր գլխի, մեր աչքի վրայ են եկել: Համեցէք, աղայ ջան, ալաշուլը պարասար է, նօքարիդ դունն է, ոսդ դիր երեսիս, ներս մրիր, երկու ձեռքով ցոյց դուեց ինձ մեր առաջնորդն ալաշուլի մուգքը:

Քրդական ալաշուխները կամ վրաններն, առհասարակ շատ անզարդ և սղարգ են լինում. ինչպէս ասացի՝ եղէզնաշար շարժական մի գազանոց պատի վրացից մէկու կէս մարդի բարձրութեամբ թաղիքով ծածկած մի բոլորշի բնակ է, որի վրամագիծն երեք գազից աւել հազիւ լինի ուրիշ ոչինչ Խսկ այսպիսի թաղիքածածկ կրուրը հերել էլ թափուի, չի կաթիլ. Մեզ հիւրասիրող քուրդը սակայն, ինչպէս երեւում էր, պարսկական շքեղ վրաններ շատ էր գեսել և հետեւել էր. Ալաշուխի ներսի կողմից հասր թաղիքի երեսը ծածկած էր էժանագին լայնածաղիկ կարմիր չթով, որի վրայ նկարուած էին որսեր և որսորդներ. Գորդածածկ յարուակի վրայ՝ փոխանակ ընդհանուր գործածական ձիթի, կամ նաւթի ճրագի, պղնձէ աշխանակի մէջ վառում էր զամբարը.

Մութն արդէն զետինն առել էր և մենք բացի Դբան առաջ առանց սեռի խորութեան խռնուած ամբոխից՝ ոչինչ չէինք որեսնում:

Այսքան բարձր էր խառնիճաղանճի աղաղակը, որ գեղական կեանքին անծանօթը կը կարծէր, թէ խորժանը յարձակում է գործելու իւր վրայ և ոգնափակ տալու. բաց ես ընդհակառակն մեծ հաճութեամբ դիրում էի լեռների գաւակների անմեղ հետաքրքրութիւնից առաջացած հարցասիրական ձգումը և միանգամայն արգելեցի հիւրասէր տան տիրոջը բարկանալ ամբոխի վրայ:

—Կը բաշխես, գլխիդ զուրբան, սարի մարդիկ են, ոչինչ չեն հասկանում, ուրախացել են, որ եկել ես, վիզը ծուեց տանգիէրը:

—Ինձ համար ձեր ցեղի պարզութիւնն աւելի սիրելի է, քան թէ զզլբաշների կեղծաւորութիւնը, պարասխանեցի ես; (Նասիր բէզի կնոջը ցիշեցի):

Իմ բերան բանալու հետ կարծես, դիւթական ազդեցութեամբ՝ բոլորը միանգամից լոեցին և սկսեցին ուշադրութեամբ լսել ինձ:

—Ես շար ուրախանում եմ, շարունակեցի ես, երբ տեսնում եմ ձեր մայրերին, քոյրերին, աղջիկներին իրանց օպարական եղբօր դիսութիւնովն ուրախացած՝ համարձակ, բաց երեսով, Ասդուգուած բաց բերանով, ազար լեզուով հաւաքուել են ինձ բարի հաղար բարի ասելու, իսկ շար զզւում եմ, երբ զզլբաշի կանայքը

ուրիշների առաջին երեսները ծածկում են, իսկ առանձին տեղերում գժուած կովի պէս կապերը կարում ու իրանց դղամարդկանց անունը գերինը Դնում: Ասենք՝ մեր հայ կանացքն էլ երեսները ծածկում են ու չըխօսքան են մնում, բայց հայ կինը զզլբաշի կնոջ պէս անպատճառ չէ, հայ կինը քրդի կնոջ պէս համեսր է:

— Հայ, հայ. շաբ ու լորթ ես հրամանք-ես անում-ես, աղայ աշ-պէր, ձայն բարձրացրին միասին մի քանի պառաւ և միջահասակ կանացք. հայի կնանիքը մեր քուրերն են, զզլբաշի կնանիքը մեր դուշմանները. մենք հայ կնանոնցը սիրում ենք, այ, թէ կուզե՞ն Գիւլօն հիմի մեր մէջն է, հայի կնիկ է, Գիւլօնից հարցրու:

Գիւլօն խօսքի հետ յիշողութեանս մէջ զարթնեցին նադօյի և օգնականի պարմած վիպական արկածքները:

Յունօյի սրբի առարկան մեծ յօժարութեամբ կը ցանկայի գետնեւ բայց առ ժամանակ խօսքը կրուրը քցելը խոհեմութիւն համարեցի:

Փոքր առ փոքր ամբոխը ցրուեցաւ և մնացին քրդական համայնքի մի քանի գլխաւորները, որոնց հիւրընկալ տանուփէրս յեփ պահեց՝ ինձ յարգելու և հետո ժամանակ անցկացնելու համար:

— Ա բաշխես, աղայ, դիմեց ինձ տանփէրը, սարի քուրդը չայից գլուխ չի հանում, մինչև հացը հասնիլը. թէ կուզես, մի քեասայ (քերեղան) նոր եփ տուած դաք կաթ խմի, սառած արիւնդքի: Եռ դայ:

— Մեծ հաճութեամբ, բայց դեռ քո անունդ ինձ յայտնիր:

— Հրամանոցդ ծառայ Հասօ:

— Գիգիս, Հասօ եղբայր, ինչ կայ. խնդրեմ ինձ համար իրիկ-նահացի նեղութիւն չըքաշես, մի գաւաթ կաթը հիրիք է ինձ, շաբ յոզնած եմ, կըզեմ հանգստանալ: Այս եղբայրներիցս էլ ներուղութիւն եմ խնդրում, որ չեմ կարող հետոներն երկար ու քաղցր մասլահաթներ անել:

— Հիմի նստիր, Հասօ եղբայր, ասացի ես մեր քրդին, երբ միւսները գիշեր բարի մաշթելով ցրուեցին, և իմ հարցմունքներին մէկ-մէկ պարասխանիր:

Գուրդը չոքեց երկու ծնկան վրայ և բերանը կիսաբաց՝ սպասողական դրութեան մէջ մրաւ:

— Առաջին՝ դու այն մարդն ես, որ Փալանթօքեանի վրայ մեր երկեցն էիր ընկել:

— Հրամանք, ես էինք: (Այդպէս էր խօսում նա. ես-ի հետ յոդնակի):

— Ի՞նչ էիր ուղում մեզանից:

— Ասում էինք՝ շուր շրապեցէք, Փալանթօքեանն իջէք, ձորն անցկացէք ու Ահմօ բէգի մօգ համար:

— Մենք ովզ, դմւ ովզ, քո ի՞նչ ցաւն էր մեր համար հոգս քաշելը:

— Մեր մեծը լրկեց, ես էլ եկանք:

— Որ լինի:

— Որ լինի թուլիթաշի (աւազակապետ) Յունօն:

— Եւ ո՞չ նադօն:

— Զէ, նադօն Յունօյի քեռու գղան է: Դու գիտեմ՝ մեր նադօն Յունօյին սիրում է, բայց Յունօյի հետ դաշտեր կփրող աւազակ չէ. Նադօն ուհանաթ մարդ է, իր գուն ու գեղի հետ է, ամիսը մի երկու անգամ էլ սարերն է գնում իր փաւարին գլուխ քաշելու:

— Իսկ նադօն մի՞թէ ձեր հետ չէր, իմ աչքովս ընկաւ:

— Հասկացայ, հրամանքդ էն մարդի համար ես խօսում, որին մենք շուրջ էինք բոլորեւ, որի հետ էինք ես ու մի ուրիշը, երբ որ երեքով եկել էինք Սուլէյման բէգի աչքին երևալու, էնպէս չէ:

— Այո, հէնց նա, զլուխս դմբացրի ես:

— Մի բան էլ ես հարցնեմ, աղայ. հրամանքդ Յունօյին աչքով քեսած չըկաս, կարծեմ. էնպէս չէ:

— Յունօյին՝ ոչ, բայց նադօյին, այս, գեսել եմ:

— Տեսան՝ ինչպէս զլիի ընկայ. հապա կասեն քուրդ միլլաթը (ազդ) էշ է, բան չի հասկանում. լին, ի՞նչ անենք, սարի մարդիկ ինք քրդերս, չորս տպնանի անասունների հետ է մեր գործը, անասունի բնութիւն ենք սրացել, բայց ախար անասունների մեջ էլ խելօքներ կան. իմ գալիք ձին ինձանից աւելի ոչովի չի թռղնիլ լրան նստելու, ծուլծուլ կը լինի, նստողին գլխի վրայ կը քցի: Եներ կան, որ առանց հովուի ոչխարի հօգ են կառավարում. էդ խելք չէ: Թէ կուզեն մեզ գիտմար ասող, մեզ վրայ ծիծաղոները, քրդերիս թող համարեն շուն ու ձի:

— Ոչինչ չըհասկացայ խօսքերիցդ, Հասօ եղբայր:

—Դու չըհասկացար, համայ նօքառդ (ծառադ) հասկացաւ. Դու երկու իրար նման մարդին մի հոգի ես շինել. հա նադոյին գեսած՝ հա Յունոյին, անց որ մի խնձոր մէջտեղից կիսած:

—Դիցուք՝ ես սխալուել եմ, բայց մի օգար մարդ, մի աւազակապեր Բնէ կապ ունի ինձ հետ, ընչի պիտի մի անժանօթի համար մրածի:

—Դու նադոյի բարեկամն ես թէ չէ:

—Այս, բարեկամն եմ:

—Թէ էդէնց է, Յունոյի բարեկամն էլ ես. երկու շաբաթ է մենք քո եփեց թաքուն մարդիկ ենք ման ածում. եթէ նադոն քեզ հետ չըլինէր՝ Դարալագեազ միած օրդ, Սուլէյման բէգը քեզ էն ձորումն երկու շաբաթ առաջ կը կողոպէր. եթէ Յունոն էս առաւուր Փալանթօքեանի ձորումը Սուլէյման բէգի աչքին չերևար, Դու էսօր՝ կամ կաներդ կապած-ընկած կը լինէիր, կամ, հեռու քեզանից, սպանուած: Եթէ Յունոն ինձ ձեր քամակից չըլրէկէր, որ ես ձեզ շփապացնեմ Փալանթօքեանի էս կողմի ձորը շուր անց կենաք, մենք կուշանացինք, չէինք կարող Սուլէյման բէգի բունը վերցնիլ, նրա մարդկանցից երկուսին գլխիդ մասաղ անիլ: Ասենք, իմ ձեր երեխից ընկնելը զուր անցկացաւ. Դուք մեր երկիւղից թևաւորի պէս էիք թռչում. մինչև ես սարի գլուխը կը բարձրանայի, Դուք Սւյո-բէգի օքաններին մօրացել էիք, ու հէնց իմանաս, իմ ձէնն էլ չըլսեցիք, շունչս կորուեց ձեզ «գնացէք» գոռալով:

—Լառում էինք, բայց ոչինչ չէինք հասկանում:

—Ես էդպէս էլ Յունոյին պարմեցի. նա մինչև իմ գնալն էր Սուլէյման բէգի. հետ կռուի բռնուել. մերոնց սպանուածն էն երկուսն էին, աղայ, բազմակողմանի ժակիտով ասաց ինձ քուրդը, որոնց հրամանքդ քո աչքովը գրեսար Աւյո-բէգի Դրանը:

—Ի՞նչ բաներ ես հնարում, քուրդ. ես Աւյո-բէգի մօք մարդու Դիակ չեմ գրեսել:

—Մի թաղցնիլ, աղայ, մեզ ամէն բան յայգնի է, մէյիլ (Դիակ) բերող երկու մարդից մէկը քեզանից վախեցած յետ փախչելուս՝ մեր ձեռքն ընկաւ ու իր բերանով Յունոյին ասաց:

—Ի՞նչ ասաց:

—Ասաց, թէ քեզ գրեսել են Աւյո-բէգի վրանումը բազմած ու

գլուխ են առել, փախել: Օգուզն ի՞նչ, խեղճերը չըդիպէին, թէ իրանք յեռ յետ շեկած, մենք իրանց բնին տիրել էինք. ապահով գուն եկան իրանց մաշարէն (քարայր), որ Սուլէյման-բէգին պարմեն, բայց էր ժամանակը Սուլէյման բէգի տեղը Յունօն էր բազմած իր կորիճներով, իսկ Սուլէյման-բէգը Գեանջու ձորերը հասած կը լինէր:

—Ուրեմն դուք բռնեցիք այն երկու մարդին, հարցը հետաքըքըքը թեամբ:

—Մէկը յեռ մաղարէն չէր մտել՝ թռաւ ձիու քամակը, ուզում էր փախչել ու թիկունքից ընկերներիցս մէկի գնդակին մափաղ եղաւ, ձիաթափ ընկաւ, մէկէլը ողջ առողջ մեր ճանգն անցաւ: Նա ասաց, որ Սուլէյման-բէգը մեր սպանած երկու ընկերի մարմինը լրկեց Աւո-բէգին, որ թաղիլ դայ ու իրանց համար հաց ճամփէ, բայց քո շուաքը հերիք էր իրանց հացն էլ մոռանալու, գլուխներն էլ:

—Ուրեմն նրան էլ սպանեցիք:

—Ո՛չ, Յունօն նամարդ (անազնիւ) չի, նրան ազափեց, որ գնայ Սուլէյման-բէգին խելքի բերի՝ մեր սարերից հեռանալու:

—Որպէս զի միայն ինքն իր խմբովը մնայ խեղճ սարւորին կոլոպփոլ, նրա դաւարը քշող, երկրագործի եղը զութանի դակից խլող, քրոշի կարծիքն իմանալու դիմամբ՝ շեշտեցի ես թշուառութիւնն արփայալի: Խօսքերը:

—Հոգուդ մելք ես անում, աղայ, թէ որ ինձ փորձում ես, վշպացաւ քուրելը. չէ որ Նադօն քեզ ասել է, թէ Յունօն որ կայ, խեղճ մարդկանց համար էն ամպն է, որ ամառուան այրող արեգակի առաջը կորում է, խանձուած, մրկած ու չորացած դաշտերին ու արփերին անձրև է դալիս ու մեռած տեղից կենդանացնում: Քանի Սուլէյման բէգն էս սարերումը չէր երեացել, Գէօդչայի ու Դարալագեազու սարերից մի ուլ չէր պակասել, մեր Նադօյի դաւարարածները գիշեր ցերեկ ապահով քնած էին լինում: Համա հիմի մեզանից կրակներում կորած (զինավառուած) դասը կորիճ նադօյի ապրանքին է գլուխ քաշում:

Դարձեալ Նադօ, մըրածեցի ես և մի քանի բոպէ լուրջ մըրածողութիւնս լարելու համար՝ լնդհարեցի քրոշի խօսակցութիւնը:

Սիրելի Հասօն, ասացի, ինչպէս երկում է, մենք իրար հետ  
խօսելիք դեռ շաբ ունինք. լաւն այն է՝ գնաս ինձ համար մի եր-  
կու հար կարպեք բերիլ տաս վրաս ծածկելու. ինձ յայտնի է, որ  
քուրդ ազգն անկողնի փոխարէն տանու գործած կարպելոներ ու  
գորգեր է գործ ածումն Ծառալիս էլ պատուիրիր՝ թող քիչ բան  
ուրի ու քնի. մենք վաղը շուր պիտի ճանապարհ ընկնինք:

—Ծառադ հիմայ կշացացած կը լինի, պեղաշոր էլ քեզ համար  
կը գինուի: Առաջ չէ, մենք չլերի ու փալասների մէջ ենք քնում,  
բայց հիւրի համար՝ հիմի սովորել ենք, պեղաշոր պահում ենք,  
ոլարասխանեց Հասօն և ինձ միայն թողեց:

(Հարունակելի)